

Սույն ուղեցույցը նախատեսված է սոցիալական աշխատանքի և հոգեբանության բաժիններում սովորող ուսանողների, ոլորտում աշխատող մասնագետների համար: «Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության մեջ» ուղեցույցում օգտագործվել է մասնագիտական տերմինաբանություն, հաշվի առնելով, որ ուղեցույցը կարդացողն ունի գիտելիքներ ոլորտի վերաբերյալ:

Ուղեցույցը բաղկացած է երեք հիմնական մասերից՝ «Ֆեմինիստական սոցիալական աշխատանք», «Ֆեմինիստական հոգեբանական խորհրդատվություն» և «Ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված դեպքերի վերլուծություն և դեպքերի վարման առանձնահատկություններ»: «Ֆեմինիստական սոցիալական աշխատանք» մասում համառոտ անդրադարձ է կատարվում ֆեմինիզմի պատմությանը և ապդեցությանը սոցիալական աշխատանքի պրակտիկայի վրա, ինչպես նաև նկարագրվում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության ձևերը: «Ֆեմինիստական հոգեբանական խորհրդատվություն» մասում անդրադարձ է կատարվում ֆեմինիստական հոգեբանության և ֆեմինիստական հոգեթերապիայի միջև գոյություն ունեցող կապին, ֆեմինիստական հոգեթերապիայի առանձնահատկություններին, փուլերին, հիմնական տեխնիկաներին և էթիկական սկզբունքներին: «Ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված դեպքերի վերլուծություն և դեպքերի վարման առանձնահատկություններ» մասում ներկայացված են ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված մի շարք դեպքեր և ընդգծված են հիմնական առանձնահատկությունները:

Ուղեցույցում ներկայացված տեսակետները, մեկնաբանությունները, եզրակացությունները պատկանում են հեղինակներին:

Չի թույլատրվում օգտագործել, թարգմանել և տարածել Ուղեցույցից որևէ հատված՝ առանց հեղինակների թույլտվության ձեռքբերման: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:



Այս ուղեցույցը մշակվել է Կանանց ռեսուրսային կենտրոնի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Զվինա թիվ Զվինա կազմակերպության կողմից: Չի թույլատրվում օգտագործել, թարգմանել եւ տարածել ուղեցույցից որևէ հատված առանց հեղինակներից թույլտվության ձեռքբերման:

Հեղինակներ՝

Սիրանուշ Դավթյան

Իրավաբանական հոգեբանության ասպիրանտ

Աննա Հովհաննիսյան

Սոցիալական քաղաքականության և վարչարարության մագիստրոսի աստիճան

Խմբագրական խումբ՝

Գոհար Շահնապարյան

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ֆելյա Բապոյան

Սոցիալական հոգեբանության ամբիոնի դասախոս

Լուսինե Քարամյան

Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն...⁷

ՄԱՍ 1. Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները սոցիալական աշխատանքում...⁸

1.1. Պատմական ակնարկ. Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի վարձացման հիմնական նախադրյալները...⁹

1.2. Ֆեմինիստական մոտեցումը սոցիալական աշխատանքում, բնորոշ առանձնահատկությունները և սկզբունքները...¹³

1.3. Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության առանձնահատկությունները, կիրառվող հիմնական տեխնիկաները...²⁰

ՄԱՍ 2. Ֆեմինիստական մոտեցման առանձնահատկությունները հոգեբանական խորհրդատվությունում...²⁶

2.1. Պատմական ակնարկ. Ֆեմինիստական հոգեբանության և ֆեմինիստական թերապիայի վարձացման հիմնական փուլերն ու նախադրյալները...²⁷

2.2. Ֆեմինիստական մոտեցումը հոգեթերապիայում. բնորոշ առանձնահատկությունները, հիմնական փուլերն ու սկզբունքները...³⁰

2.3. Ֆեմինիստական թերապիայում կիրառվող առանձնահատուկ տեխնիկաներ և էթիկական սկզբունքներ...³⁵

ՄԱՍ 3. Ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված դեպքերի վերլուծություն և դեպքերի վարման առանձնահատկություններ...⁴⁰

Վերջաբան...⁴⁹

Օգտագործված գրականության ցանկ...⁵⁰

Տերմինաբանական բառարան...⁵¹

Ներածություն

Սույն ուղեցույցի ստեղծման համար հիմք է հանդիսացել սոցիալական աշխատանքի և հոգեբանական խորհրդատվության ոլորտների իրավիճակային վերլուծությունը, ըստ որի, ֆեմինիստական մոտեցմամբ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքները սակավ են, կարծրատիպային, կամ արտացոլում են այն տեսակետը, որ ֆեմինիստական մոտեցումը միակողմանի է և չի «աշխատում» գործնական մակարդակում: Այս ուղեցույցի ստեղծումը ժամանակի հրամայական է, քանի որ միջապագային պրակտիկայում դեպքերի հետ ֆեմինիստական մոտեցմամբ աշխատանքն առօրյա պրակտիկա է հանդիսանում, մինչդեռ ՀՀ-ում, եթե փորձեք որպես վերլուծության առարկա վերցնել կրթական համակարգը, ապա կդիտարկենք, որ, բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում բացակայում է ֆեմինիստական մոտեցմամբ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացները, դասաժամերը:

Ուղեցույցը բաղկացած է երեք հիմնական մասերից՝ 1. «Ֆեմինիստական սոցիալական աշխատանք», 2. «Ֆեմինիստական հոգեբանական խորհրդատվություն» և 3. «Ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված դեպքերի վերլուծություն և դեպքերի վարման առանձնահատկություններ»: «Ֆեմինիստական սոցիալական աշխատանք» մասում համառոտ անդրադարձ է կատարվում ֆեմինիզմի պատմությանը և ավդեցությանը սոցիալական աշխատանքի պրակտիկայի վրա, ինչպես նաև նկարագրվում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության ձևերը: «Ֆեմինիստական հոգեբանական խորհրդատվություն» մասում անդրադարձ է կատարվում ֆեմինիստական հոգեբանության և ֆեմինիստական հոգեթերապիայի միջև գոյություն ունեցող կապին, ֆեմինիստական հոգեթերապիայի առանձնահատկություններին, փուլերին, հիմնական տեխնիկաներին և էթիկական սկզբունքներին: «Ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված դեպքերի վերլուծություն և դեպքերի վարման առանձնահատկություններ» մասում ներկայացված են ֆեմինիստական մոտեցմամբ իրականացված մի շարք դեպքեր և ընդգծված են հիմնական առանձնահատկությունները:

Հեղինակների կողմից ներկայացվել են տեսական և գործնական մասեր, ինչն իր հերթին հնարավոր կդարձնի օգտագործել ստացած տեղեկությունները սոցիալական աշխատանքում և հոգեբանական խորհրդատվությունում:

**Ֆեմինիստական
մոտեցման
առանձնահատկությունները
սոցիալական
աշխատանքում**

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

1.1. Պատմական ակնարկ. **Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի զարգացման հիմնական նախադրյալները**

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքը սկիզբ առավ ֆեմինիստական սոցիալական շարժումից, որն առաջնորդվում էր կանանց կողմից, ովքեր աշխատում էին այլ կանանց հետ իրենց համայնքներում: [1, էջ 138-140] Նրանք նպատակ էին հետապնդում բարձրացնելու կանանց սոցիալ-տնտեսական բարեկեցության մակարդակը՝ գտնելով ընդհանրություններ նրանց անհատական կարիքների և հասարակությունում ունեցած սոցիալական կարգավիճակի միջև: Չնայած նրան, որ որոշ տեսաբաններ ևս նշում էին, որ հասարակությունն է ստեղծում «անձնային հիվանդությունները», ֆեմինիստական սոցիալական աշխատանքն էր, որ առաջինը մատնանշեց կանանց հիմնախնդիրների և կնոջը վերագրվող սոցիալական դերերի միջև կապի մասին:

Կանանց ազատագրման շարժումն իր մեկնարկից սկսած թիրախավորեց այն դժվարությունները, որոնց բախվում են կանայք սեքսիզմի (բացատրությունը տե՛ս տերմինաբանական բառարանում) պատճառով: Այս շարժումը պարտավորեցրեց սոցիալական աշխատողներին փոխել մինչ այդ առկա մոտեցումը և վերաձևակերպել սոցիալական գործողությունների նպատակը:

Ֆեմինիստական շարժման պատմությունը հաճախ բաժանվում է երեք հիմնական «ալիքների», ինչի շնորհիվ հնարավոր եղավ ներկայացնել տարբեր տեսական հեռանկարները: **Առաջին «ալիքը»** սկսվում է կանանց **սուֆրաժիստական շարժմամբ** (բացատրությունը տե՛ս տերմինաբանական բառարանում), 1800-ականների վերջին: Այս շրջանում ավելի շատ պայքար էր մղվում մանկական աշխատանքի, սեքս աշխատողների (sex workers) անվտանգության, աղքատ գյուղաբնակ կանանց կյանքը բարելավելու և այլ հարցերի համար: Լիբերալ ֆեմինիստական մոտեցումը, որը կենտրոնանում էր քաղաքական և իրավական գործողությունների վրա, հանդիսանում էր ալիքի հիմնական տեսական

մոտեցումը: Ֆեմինիստական շարժման **երկրորդ «ալիքը»** սկիզբ է առել 1960-70-ական թվականներին, քաղաքացիական իրավունքների և հակամիլիտարիստական (antimilitarism) շարժումների (բացատրությունը տես տերմինաբանական բառարանում) հետ չուզահեռ, և դիտարկվում է ավելի ռադիկալ, քան առաջինը: 1960-ականների վերջին ռադիկալ ֆեմինիզմն առավել նշանակալից դեր սկսեց ունենալ ֆեմինիստական շարժման մեջ՝ հաճախ քննադատելով լիբերալ ֆեմինիստական մոտեցումը: Թեև ֆեմինիստական շարժման երկրորդ «ալիքը» հաճախ ասոցացվում է ռադիկալ ֆեմինիզմի հետ, այնուամենայնիվ, լիբերալ ֆեմինիստական մոտեցումը շարունակում էր մնալ այս ալիքի մասնակի: 1970-ականներին, երկրորդ ալիքի պարզացման պատմական ընթացքի ավարտին, սկսում է ի հայտ գալ սոցիալիստ-ֆեմինիստական մոտեցումը և սևամորթ, ասիացի և այլ ռասայական ու էթնիկ խմբերի պատկանող կանանց (women of color) մոտեցումը, որն առավել ընդգծեց ֆիմինիստների շրջանում առկա գաղափարախոսական տարբերությունները: Երկրորդ «ալիքի» շրջանում կարևորվեց հայրիշխանական ինստիտուտների փոփոխությունը, կանանց վերարտադրողական առողջության ու իրավունքների, սեռականության և ընտանեկան բնության հետ կապված հարցերը: Ֆեմինիզմի **երրորդ «ալիքը»** սկիզբ առավ 1990-ականներին, երբ սևամորթ, ասիացի և այլ ռասայական ու էթնիկ խմբերի պատկանող կանայք (women of color) և լեզբի, բիսեքսուալ և տրանսգենդեր կանայք, բարձրացրեցին «սպիտակ» և տարասեռական (հետերոսեքսուալ) կանանց կողմից խտրականության ենթարկվելը: Երրորդ «ալիքը» պարզացրեց «մենք ընդդեմ նրանց» գաղափարը՝ շեշտադրելով կանանց ապատությունը սեփական անձին վերաբերող ընտրությունների հարցում:

Չնայած այս երեք ալիքների գոյությանը՝ սոցիալական աշխատանքի մասնագետները ոչ միշտ են ակտիվ դերակատարում ունեցել ֆեմինիզմի պատմության մեջ: Մ. Բարետտին նշում է, որ 1960-ականներին և 1970-ականներին, մինչ ֆեմինիստական կազմակերպությունները պայքարում էին կանանց ուղղված քաղաքականությունը փոխելու համար, սոցիալական աշխատողները գրեթե չէին աջակցում այս շարժմանը: Չնայած նրան, որ սոցիալական աշխատանք մասնագիտության առանձին ներկայացուցիչներ ներգրավված են եղել նաև ֆեմինիստական շարժման մեջ, միայն 1980-ականների վերջին է, որ շատ սոցիալական աշխատողներ սկսեցին բարձրաձայնել ֆեմինիզմի «ձայնը» սոցիալական աշխատանքում: [1, էջ 138-140]

Սոցիալական աշխատանքում ֆեմինիզմ հասկացության վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Այդ իսկ պատճառով, կիրառվում են տարբեր մոտեցումներ, դրանցից թերևս առանձնանում են հիմնական երեքը՝ **լիբերալ ֆեմինիզմը, ռադիկալ ֆեմինիզմը և սոցիալիստական ֆեմինիզմը:**

Լիբերալ ֆեմինիզմը կենտրոնանում է հնարավորությունների անհավասարության վրա, **ռադիկալ ֆեմինիզմը**՝ պատրիարխալ հարաբերությունների վրա, **սոցիալիստական ֆեմինիզմը** թիրախավորում է կանանց ստորադասումը՝ որպես սոցիալական անհավասարության հետևանք:

Միևնույն ժամանակ, ֆեմինիստական այս ուղղություններն ենթարկվում են քննադատության: Մասնավորապես, լիբերալ ֆեմինիզմը հաճախ քննադատվում է շահերի իրական տարբերությունները, կանանց ու տղամարդկանց կյանքի փորձը անտեսելու պատճառով և կենտրոնանում հավասար հնարավորություններ ստեղծելու գաղափարի վրա, մինչդեռ հավասար հնարավորությունները միշտ չէ, որ երաշխավորում են, որ կանայք, այնուամենայնիվ, կարող են օգտվել դրանցից: Ռադիկալ ֆեմինիզմը քննադատվում է գենդերային տարբերությունների շրջանակներում միայն կնոջ փորձի վրա կենտրոնանալու պատճառով: Գենդերային տարբերությունների առանձնացումը կարող է հանգեցնել կանանց՝ սոցիալական փոփոխություններին հասնելու կարողությունների անկմանը և զոհի կարգավիճակում հանդես գալուն: Սոցիալիստական ֆեմինիզմը «քննադատվում է» ռադիկալ ֆեմինիզմի հետևորդների կողմից, քանի որ չի դիտարկում տղամարդկանց և կանանց միջև բռնի հարաբերությունների բավմապանությունը: Այս ուղղության կողմնակիցները չեն անդրադառնում բռնության և սեռականության թեմաներին: Դասակարգային և տնտեսական ճնշման դիտարկումը անտեսում է հայրիշխանական հարաբերությունների մասին պատկերացումները:

Բ. Քոլինսը նշում է, որ սոցիալական աշխատողների համար կարևոր է տեղեկացված լինել այս հեռանկարների մասին, կանանց հետ աշխատանքը կառուցելիս: Ֆեմինիստական ուղղությունների ուսումնասիրությունը թույլ կտա պրակտիկ սոցիալական աշխատողներին տարբերակել հասարակության ներսում առկա **ուժի և իշխանության բաշխումը:** [7, էջ 28-31]

Չնայած այն փաստին, որ առկա են տարբեր ֆեմինիստական մոտեցումներ տարբեր արժեքային կողմնորոշումներով, դրանք բոլորը թիրախավորում են հայրիշխանության հայեցակարգը: Այսպես, Լորբերը սահմանում է **հայրիշխանությունը**, որպես կազմակերպությունների, ինստիտուտների և առօրյա կենսագործունեության համակարգ, որը թույլ է տալիս տղամարդկանց վերահսկել կանանց կյանքը: [4, էջ 58]

Ֆեմինիստական գաղափարներն ունեն երկար պատմություն: Դրանք փոխկապված են կանանց նկատմամբ քաղաքական, սոցիալական և մշակութային ճնշումների հետ, որոնք առաջանում են հայրիշխանական հասարակության կողմից, որն իր հերթին նպաստում է, որ ուժը և իշխանությունը կենտրոնանան տղամարդկանց ձեռքերում՝ դրանով իսկ գրկելով կանանց ձայնի իրավունքից, որն էլ բերում է կնոջ դերի ստորադասմանը:

Հատկանշական է, որ մինչ ֆեմինիստական սոցիալական աշխատանքի ձևավորումը, սոցիալական աշխատանքում կիրառվող տեսություններն առավել տղամարդկանցենտրոն են եղել, այդ թվում և այն տեսությունները, որոնք հիմնվել են գենդերային հետազոտությունների վրա: Այս տեսանկյունից, ֆեմինիստական մոտեցումը նոր փուլ ձևավորեց նաև սոցիալական աշխատանքի տեսության մեջ՝ առաջադրելով ավելի կնակենտրոն տեսական հիմքեր, որոնք հիմք կհանդիսանային շահերի պաշտպանությունն առավել ծառայեցնելու կանանց և կին սոցիալական աշխատողների դերի բարձրացմանը հասարակությունում:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի առաջին աշխատությունները կարելի է դասել լիբերալ միջամտության ձևին: Դրանք արտահայտում էին ընդհանուր արժեքներ, ինչպես օրինակ՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանության կարևորությունը: 1970-ականների, սոցիալական աշխատողների մտածողության վրա ազդեցին ակադեմիական հետազոտությունները՝ նվիրված կանանց հիմնախնդիրներին և ռադիկալ տեսությունների ձևավորումը կանանց դերի մասին ընտանիքում: Ֆեմինիստական շարժումն, իր հերթին, ազդել է կանանց հետ խորհրդատվության ձևերի վրա:

Ձ. Օրմեն սահմանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքի հետևյալ 4 հիմնական գործոններ.

Պայմանները, որոնցում գտնվում են կանայք. կանայք կիսում են ճնշման և խտրականության սեփական փորձը:

- Պրակտիկա, որն ուղղված է կանանց հիմնախնդիրների լուծմանը, որի հիմնաքարն է կնոջ պահանջմունքները և դրանց բավարարման ուղիների փնտրումը:
- Կնոջ տեսակետը. կանայք ընկալում են աշխարհն այլ կերպ, քան տղամարդիկ, մասնավորապես՝ դա վերաբերում է սոցիալական և բարոյական հարցերին:
- Աշխատանք բազմապատկան հետ. շնորհիվ ճնշումներին ենթարկվելու կուտակված փորձի՝ կանայք կարողանում են ևույնականացնել, ճանաչել սոցիալական տարբերությունների շատ ձևեր: [7, էջ 78]

Ֆեմինիստական տեսության ձևավորումն ապդակ հանդիսացավ վերանայելու սոցիալական աշխատանքի տեսությունը:

1.2. **Ֆեմինիստական մոտեցումը սոցիալական աշխատանքում, բնորոշ առանձնահատկությունները և սկզբունքները**

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքը հիմնվում է *իշխանության վերախմաստավորման, գործընթացի հավասար կառավարման և «անձնականը քաղաքական է»* մոտեցումների վրա: [2, էջ 12] Այսօր, թերևս, շատ խոցելի խմբերի հետ աշխատելիս, **ապատագրումը (եմանսիպացիան)** դառնում է սոցիալական աշխատանքի կարևոր մոտեցում:

Ֆեմինիստական մոտեցման կիրառումը սոցիալական աշխատանքում թույլ է տալիս դիտարկել կանանց կարգավիճակը տարբեր հասարակություններում: Դա կարևոր է նաև այն տեսանկյունից, որ սոցիալական աշխատանքով հիմնականում պարզվում են կանայք: Ֆեմինիստական գաղափարախոսությունը կենտրոնացնում է սոցիալական աշխատանքի ջանքերը կանանց հիմնախնդիրների ընկալման վրա հասարակության մեջ: *Այդ գաղափարախոսության հիմքում ընկած է ինչպես ռադիկալ*

փոփոխությունների հասնելն, այնպես էլ հավասարությունը և փոխաջակցությունը: Ֆեմինիստական մոտեցումը սոցիալական աշխատանքում կենտրոնանում է իշխանության անհավասար բաշխման վրա, որը հանգեցնում է

- կանանց դերի ստորադասման,
- կանանց կարողությունների, փորձի և դերի ժխտման կամ սահմանափակման:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքը դիտարկվել է Ռ. Սենդսի և Կ. Նուկոյի կողմից (1992)՝ ընդգծելով սոցիալական և գենդերային հիմնախնդիրների թիրախավորման կարևորությունը: Սոցիալական աշխատողի համար կարևոր է ձևավորել ոչ կարծրատիպային մտածելակերպ, որը չի դասակարգի մարդկանց ըստ գենդերային բնութագրիչների:

Կարծրատիպային մտածելակերպ է օրինակ ենթադրել, որ կինը պետք է հոգ տանի երեխաների մասին, քանի որ նա է լույս աշխարհ բերել նրանց:

Ֆեմինիստական մոտեցումը փորձում է կոտրել հասարակությունում առկա գենդերային կարծրատիպերը, մինչդեռ **ընտանեկեն միջամտության ձևերը** նպատակ չեն հետապնդում փոխելու առկա գենդերային կարծրատիպերը, ավելին, դրանք շատ հաճախ չեն հակադրվում այդ կարծրատիպերին:

Այսպես, Ջ. Միլսը նշում է, որ ֆեմինիզմի կարևոր գաղափարներից է *ապատագրել կանանց*, որպեսզի իրենք կարողանան *որոշումներ կայացնել սեփական կյանքի վերաբերյալ*, որն էլ կնպաստի սոցիալական արդարության հաստատմանը, կանանց իրավունքների լիարժեք իրացմանը, և, ի վերջո, կնպաստի նաև ընտանեկան բնությունից կանանց ապատագրմանը:

Ֆեմինիստները՝ որպես անհատներ, ովքեր ունեն համարձակություն բարձրաձայնելու հիմնախնդիրները և պայքարի մեջ մտնելու առկա համակարգերի հետ, իրենց տեսանկյունից փորձում են բարելավել կանանց կյանքի պայմանները: Ֆեմինիստական մոտեցումն ընդգծում է սոցիա-

լական հարաբերությունների գեղեցիկացումը՝ հանրային և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում: Համաձայն բավարարիչ հետազոտությունների, տղամարդիկ հանդիսանում են առավել շահեկան դիրքում, ի տարբերություն կանանց՝ սկսած աշխատաշուկայի հասանելիությունից, և վերջացրած քաղաքական կյանքում մասնակցությամբ: Հետազոտությունները նաև փաստում են, որ տղամարդիկ ունեն սոցիալական վերահսկողություն կանանց նկատմամբ, ներառյալ կանանց կյանքի էմոցիոնալ, սեռական և ֆիզիկական ոլորտները: Այս ամենը թերևս վկայում է հայրիշխանական համակարգի գերակայության և այդ համակարգում կանանց դերի ստորադասման մասին: [3]

Բավարարիչ հետազոտություններ արդեն իսկ փաստել են սոցիալական աշխատանքի և ֆեմինիզմի միջև անժխտելի կապի մասին, որը թերևս հիմք է հանդիսացել, որ սոցիալական աշխատանքի միջազգային պրակտիկայում շատ մասնագետներ այսօր նույնականացնում են իրենց ֆեմինիստների հետ:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտությունը նպատակ է հետապնդում **շահառուների ռեսուրսների ակտիվացում**, որպեսզի անձն ինքնուրույն կարողանա կառուցել իր կյանքը, **հավասարության գաղափարի վրա հիմնվող արժեքների ներդրում աշխատավայրում աշխատակիցների միջև**, ինչպես նաև նպաստում գեղեցիկացնում անհավասարությունից բխող գործընթացների և համակարգերի փոփոխությունը: Սոցիալական աշխատանքի ֆեմինիստական մոտեցումը հիմնվում է այն ենթադրության վրա, որ շահառուի խնդիրները *պայմանավորված չեն կնոջ անձնային առանձնահատկություններով*, և հանդիսանում են սոցիալական կառուցվածքի հետևանք, որոնք հայրիշխանական և ճնշող (oppressive) են կանանց նկատմամբ: Այս մոտեցումը հիմնվում է այն գաղափարի վրա, որ հայրիշխանական մշակույթում տղամարդիկ ունեն առավելություններ, որոնք խոչընդոտում են գեղեցիկացնում հավասարությունը: Այդ իսկ պատճառով, այս մոտեցման նպատակն է ստեղծել հասարակություն, որը հավասար կլինի, թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար: [5, էջ 120]

Ընտանիքներում հաճախ հանդիպում է հետևյալ խնդիրը, որ կիրնը ցանկանում է աշխատել, իսկ ամուսինը թույլ չի տալիս, քանի որ դիտում է կնոջ դերը տնային գործեր իրականացնել:

լու և երեխաների խնամքը կազմակերպելու մեջ:

Ընտանեհեն միջամտության շրջանակներում, կարևորվում է ընտանիքի ամբողջականության պահպանումը և միջամտությունը այս դեպքում կտարվի այն ուղղությամբ, որ ընտանիքում հարթվի կոնֆլիկտը, միջամտությունը կկառուցվի ամուսնու արժեքային կողմնորոշման շուրջ, որպեսզի նա փոխի իր գաղափարը այս հարցի շուրջ և, ի վերջո, թույլ տա կնոջը, որ աշխատի: Մինչդեռ ֆեմինիստական միջամտությունն ենթադրում է, որ սա համակարգային խնդիր է, կարևոր է ուժեղացնել կնոջը, որպեսզի նա կարողանա որոշումներ կայացնի սեփական անձի վերաբերյալ: Սոցիալական աշխատողը վեր կհանի կնոջ փորձը և ռեսուրսները և դրանց ակտիվացման միջոցով կընդգծի կնոջ ավատագրման գաղափարը հայրիշխանական համակարգից:



Պրակտիկ սոցիալական աշխատողները, ովքեր կիրառում են ֆեմինիստական մոտեցումն իրենց աշխատանքում, նպատակ ունեն ստեղծելու հասարակությունում հավասարություն՝ միավորելով անհատականը քաղաքականի հետ: Ֆեմինիստ սոցիալական աշխատողները կապում են կանանց անձնային փորձը ակնկալվող սեռա-դերային նորմերին, ճնշող սոցիալական կառուցվածքներին և խտրական փորձին: Ֆեմինիստ սոցիալական աշխատողները հաճախ նշում են, որ անձնականը քաղաքական է, ցույց տալու համար այն գաղափարը, որ անձի անհատական փորձը կարող է ընկալվել միայն քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների համատեքստում:

Ֆեմինիստական և սոցիալական աշխատանքի արժեքները շատ հաճախ նույնականացվում են: [5, էջ 120]

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի սկզբունքները

Ֆեմինիստական մոտեցումն ենթադրում է ապահով միջավայրի ստեղծում կանանց համար, ովքեր աջակցություն են ստանում կանանց կողմից:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի սկզբունքներն են՝

- **Հավասարը հավասարին սկզբունք.** ծառայություն մատուցող անձը չունի «փորձագետի» դիրքորոշում, և խորհրդատվության ժամանակ խորհրդատվություն տրամադրող մասնագետը կամ սոցիալական աշխատողը ևս կարող է պատմել որպես կին, իր անձնական փորձի մասին:

Միջամտության այլ ձևերը կիրառելիս, մասնագետին չի թույլատրվում կիսվել իր սեփական փորձով, անշուշտ, ֆեմինիստական միջամտության կիրառման ժամանակ, մասնագետը չպետք է սկսի պատմել իր սեփական կյանքի խնդիրներից, սակայն հատկապես ռեֆլեքսիայի (բացատրությունը տես տերմինաբանական բառարանում) իրականացման ժամանակ, մասնագետը կարող է խոսել նաև իր փորձից:

Օրինակ՝ ես, որպես մայր ևս բախվել եմ այդ խնդրի հետ, երբ ստիպված ես թողնել երեխայիդ տանը այլ մարդու խնամքի ներքո և աշխատել:

- **Հարգանք և արժանապատվություն.** անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից, յուրաքանչյուր կին ստանում է հարգալից և արժանապատիվ վերաբերմունք:

- **Ինքնորոշման սկզբունք.** կինն ինքն է հանդիսանում իր իրավիճակի պատասխանատուն և ինքն է որոշումներ կայացնում իր կյանքի յուրաքանչյուր ոլորտում: Անկախ կայացրած որոշումից խորհրդատուն իր կողքին է և սատարում է իր յուրաքանչյուր քայլի համար:

Սոցիալական աշխատողին դիմում է կին, ով ցանկանում է կատարել հղիության արհեստական ընդհատում, սակայն չունի վստահելի մասնագետ:

Ֆեմինիստական միջամտության շրջանակներում ինքնորոշման սկզբունքը, թերևս առավել առաջնային և կարևոր սկզբունքներից է աշխատանքները կառուցելիս, մինչդեռ ընտանեկան միջամտության դեպքում, սոցիալական աշխատողը կաշխատի այն ուղղությամբ, որպեսզի մտափոխի կնոջը կատարել հղիության արհեստական ընդհատում:

- **Ակտիվ լսելու և ապրումակցելու սկզբունք**, որն արտահայտվում է վերբալ և ոչ վերբալ հաղորդակցության միջոցով:

- **Վստահություն և գաղտնապահություն**. կնոջ հայտնած տեղեկատվությունը համարվում է հավաստի և պահպանվում է նրա հայտնած տեղեկատվության լիարժեք գաղտնիությունը, բացառությամբ, եթե նրա կյանքին անմիջական վտանգ չի սպառնում:

- **Անվերապահ դրական և ոչ քննադատական վերաբերմունք կնոջ նկատմամբ**. բռնության պատասխանատուն միմիայն բռնարարն է:

- **Ուժեղացում**. ինչպես անհատական, այնպես էլ խմբային հանդիպումները շահառուների հետ, ի վերջո ծառայում են կնոջ ուժեղացմանը:

Կնոջ ուժեղացումը հանդիսանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքի կարևոր նպատակներից, թերևս այս նպատակին համենելու համար, կարևոր է գնահատել կնոջ ուժեղ և թույլ կողմերը և շեշտադրելով ուժեղ կողմերը՝ հասնել իրավիճակի փոփոխությանը:

- **Անձնականը քաղաքական է**. յուրաքանչյուր կնոջ անձնական խնդիրների հիմքում ընկած են տվյալ հասարակությունում առկա համակարգային խնդիրները և այս տեսանկյունից, մեկ դիմած ցանկացած կին շահերի պաշտպանության գործակալ է:

Սոցիալական աշխատողն աշխատում է ընտանեկան բռնության ենթարկված կնոջ հետ: Ընտանեկան միջամտության ցանկալի վերջնարդյունք կլինի բռնության շղթայի կտրումը, ընտանիքի ամրապնդումը և առողջացումը, մինչդեռ ֆեմինիստական միջամտության ցանկալի արդյունք է հանդիսանում ընտանեկան բռնության երևույթի նկատմամբ հասարակական և ներպետական մակարդակով օրակարգի հաստատումը: Ֆեմինիստական միջամտությունը դուրս է գալիս

միջամտության միկրոմակարդակից և աշխատանքներ տա-
նում նաև մակրոմակարդակում:

- **Կանանց մասնակցության խթանում.** Նպաստել, որ կանայք իրենք բարձրաձայնեն իրենց ձայնը որոշումների կայացման մակարդակում:
- **Իրազեկում և կանանց հիմնախնդիրների համընդհանուր ներկայացում:**

Թեև սոցիալական աշխատանքը և ֆեմինիզմը կիսում են շատ արժեքային մոտեցումներ, այնուամենայնիվ, առկա են նաև որոշակի տարբերություններ: Ֆեմինիստ սոցիալական աշխատող Ջ. Քոլինսը, պնդում է, որ սոցիալական աշխատանքը կենտրոնանում է «ընտանեհեն» մոդելների վրա: Նա նշում է, որ, թիրախավորելով ընտանիքի կարևորությունը, նրանք կարող են դիտարկել կանանց ճնշվածությունը և ազդել նրանց ինքնորոշման վրա՝ ընդգծելով նրանց, որպես խնամողի դերը: Բերլին և Կրավետսը (1981) պնդում են, որ սոցիալական աշխատողները միտում ունեն կենտրոնանալու միջամտության այնպիսի եղանակների վրա, որոնք քաջալերում են անձին փոխվելու, որպեսզի ավելի հեշտությամբ ադապտացվեն արտաքին միջավայրին: [1, էջ 120]

Համաձայն ֆեմինիստական մոտեցման, կանանց շատ հիմնախնդիրներ առաջանում են հենց հայրիշխանական համակարգի կողմից ստեղծված արժեքների պատճառով, մասնավորապես՝ հայրիշխանության շնորհիվ է, որ տղամարդիկ համարվում են ընտանիքի գլխավորները և ղեկավարում են այն: Այս դոմինանտ դիրքորոշումը, կարող է ստեղծել միջավայր ընտանեկան բռնության համար: Եվ հենց այդ նույն համակարգի արժեքների շնորհիվ է, որ կանայք ենթարկվում են կրկնակի զոհականացման մեղադրվելով բռնությունը իրահրելու մեջ:

1.3. **Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության առանձնահատկությունները, կիրառվող հիմնական տեխնիկաները**

Ինչպես ֆեմինիզմում, այնպես էլ, սոցիալական աշխատանքի ֆեմինիստական մոտեցման մեջ, էական է «անձնականը քաղաքական է» սկզբունքը:

Միջամտության տեսանկյունից, Լ. Դոմինելին սահմանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքը՝ որպես սոցիալական աշխատանքի մի ձև, որը վերցնում է կնոջ անձնային փորձը՝ որպես վերլուծության ելակետ և, կենտրոնանալով հասարակությունում կանանց դիրքի և անձնային կարիքների վրա, արձագանքում վերջինիս հիմնախնդիրներին, ստեղծում հավասարը հավասարին մոտեցմամբ հարաբերություններ և արձագանքում կառուցվածքային անհավասարություններին: Կանանց առանձնահատուկ կարիքներին արձագանքը հոլիստիկ եղանակով և նրանց կյանքի բարդություններին, ներառյալ՝ ճնշումներին և անապատություններին արձագանքը, հանդիսանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության կարևոր բաղադրիչ: Այն կենտրոնանում է սոցիալական հարաբերությունների կախյալության փորձի վերլուծության վրա՝ թիրախավորելով նաև նրանց, ում հետ կինը գտնվում է մշտական հարաբերությունների մեջ, ինչպես օրինակ՝ տղամարդիկ, այլ կանայք, երեխաներ: [4, էջ 48]

Իր ավելի ուշ աշխատություններում Լ. Դոմինելին սահմանում է ֆեմինիստական սոցիալական աշխատանքը որպես պրակտիկա, որը հիմնվում է կնոջ բավմապիսի փորձի վերլուծության վրա: Այդ վերլուծության առանցքային գաղափարն է կնոջ դիրքը հասարակությունում և անհատական դժվարությունները, որոնք առաջանում են շահառուի և սոցիալական աշխատողի միջև, ով փորձում է կառուցել հավասար հարաբերություններ:

Հետևաբար, ֆեմինիստական միջամտությունն ենթադրվում է ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ մակրոմակարդակում, և **ուժեղացման մոտեցումը** հաճախ օգտագործվում է խրախուսելու շահառուներին, փոփոխելով սեփական իրավիճակը, հասնել սոցիալական փոփոխությունների: [4]

Այսպես, դեպքի հետ աշխատելիս, կարևոր տեխնիկաներից է **կնոջ ուժեղ կողմերի բացահայտումը և շեշտադրումը**: Շատ կարևոր է, որ այս մոտեցմամբ աշխատելիս, շեշտը դրվի ոչ թե կնոջ խնդիրների վրա, այլ՝ ռեսուրսների:

Ֆեմինիստական մոտեցմամբ աշխատող սոցիալական աշխատողը շահառուի հետ **քննարկում է խնդրի լուծման բոլոր հնարավոր տարբերակները**՝ ներառելով անգամ նրանք, որոնք գեղեցիկապես նորմերից վեր են:

Աշխատելով ընտանիքի հետ, որն ունի ֆինանսական և տրնտեսական կարիքներ, ֆեմինիստական մոտեցմամբ աշխատող սոցիալական աշխատողը, կարող է առաջարկել, որ ամուսինը մնա տանն՝ իրականացնելով երեխաների խնամքը, մինչ մայրը կարող է սկսել աշխատել, քանի որ մոր աշխատանքը առավել վարձատրվող է: Մինչդեռ միջամտության ոչ ֆեմինիստական ձևերի կիրառման պարագայում, հնարավոր է շեշտադրվի տղամարդու պբաղվածությունը, քանի որ երեխաները մանկահասակ են և մորն է վերագրվում հասարակության կողմից երեխաներին խնամելու դերը:

Հարգելով շահառուի ինքնորոշումը՝ սոցիալական աշխատողը կարող է առաջարկել «ոչ սեքսիստական» (բացատրությունը տե՛ս տերմինաբանական բառարանում) մոտեցում՝ որպես այլընտրանք հասկանալու շահառուին հասանելի բոլոր տարբերակները:

Շահառուի գիտակցության բարձրացումն, ինքնօգնության ձևավորումը և ուժեղացումը հանդիսանում են այն հիմնական տեխնիկաները, որոնք կիրառվում են շահառուի հետ աշխատանքում:

Շահառուի գիտակցության բարձրացումը իրականացվում է վերջինիս հայրիշխանական համակարգի հայեցակարգը ներկայացման միջոցով: Ուժեղացումը բազմափուլային գործընթաց է, որը ն՝ արդյունք է, և՛ գործընթաց շահառուի ինքնուրույնության և ուժի արտահայտման: Այն հուլիստիկ գործընթաց է և ենթադրում է կնոջ տնտեսական, սոցիալ-հոգեբանական ուժեղացում և անկախացում: Թերևս, կնոջ ուժեղացումը ևս կարևոր տեխնիկա է, որը մասնագետը կարող է հասնել **կնոջ ուժեղ կողմերի բացահայտման** միջոցով:

Սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկայի (բացատրությունը, տես տերմինաբանական բառարանում) տեսանկյունից, սոցիալական աշխատողի կարևոր գործառույթն է սոցիալական փոփոխություններին հասնելը, ներառյալ քաղաքականության փոփոխությունը, որն էլ իր հերթին կնպաստի կանանց դերի փոփոխությանը:

Միջամտության տեսանկյունից, սոցիալական աշխատողները կիրառում են բազմաբնույթ տեսական մոտեցումներ և համաձայն վերջին հետազոտությունների, լիբերալ ֆեմինիստական դպրոցը հանդիսանում է առավել հաճախ կիրառելին: Աղյուսակ 1-ում առավել մանրամասն անդրադարձ է կատարվում ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության մեթոդներին:

Ֆրիմենի կողմից անցկացված հետազոտության արդյունքների համաձայն՝ 773 սոցիալական աշխատողներ, ովքեր աշխատում են դեպքերի հետ՝ հիմնականում կիրառել են լիբերալ սոցիալական աշխատանքի մոտեցումները (մոտ 78%), իսկ ռադիկալ ֆեմինիստական դպրոցի հետևորդներ են եղել 16.8%:

Թերևս ֆեմինիստական միջամտությունը կարող է կիրառվել նաև տղամարդկանց հետ աշխատանքում, սակայն տղամարդկանց հետ աշխատելիս առաջանում են որոշակի դժվարություններ, քանի որ գենդերային փոխհարաբերությունները նման չեն ճնշման և խտրականության այլ ձևերին: Խնդիրը նրանում է, որ տղամարդիկ և կանայք գտնվում են սերտ փոխհարաբերությունների մեջ, և մարզինալացված չեն միմյանցից, ինչպես այլ շատ խոցելի խմբեր: Նման կերպ, ֆեմինիստական սոցիալական աշխատողները կարող են առաջնային համարել կանանց հետ աշխատանքը, ինչպես օրինակ, ընտանեկան բռնության ենթարկված կնոջ հետ աշխատանքը կարող է համարվել առավել առաջնային, քան աշխատանքը բռնարարի հետ, որը դեպքերի մեծ մասում հենց տղամարդն է: Բացի այդ, համաձայն ֆեմինիստական գաղափարախոսության, տղամարդիկ արդեն իսկ ունեն հասանելիություն շատ ռեսուրսներին:

Պրոֆեմինիստական սոցիալական աշխատանքը տղամարդկանց հետ ուղղված է նվազեցնելու գենդերային հիմքով բռնության մակարդակը, մասնավորապես՝ կրթական ծրագրերի միջոցով: Հատկապես երիտասարդ տղաների հետ աշխատանքը կարող է լինել բավականին արդյունավետ և նպաստել տղամարդկանց շրջանում առկա նորմերի փոփոխությանը:

Ֆեմինիստական սոցիալական աշխատանքն օգնում է սահմանազատել անձնայինը հասարակականից, քանի որ սոցիալական աշխատողները,

ովքեր իրականացնում են իրենց գործունեությունը «հասարակության անունից», պարտավոր են ստուգել, թե ինչպես է անձնային փորձը դառնում հասարակական: **Հնարավորությունների և կարողությունների գնահատումը** սոցիալական աշխատողի կողմից նպաստում է կանանց ակտիվությանը:

Աղյուսակ 1. Ֆեմինիստական սոցիալական աշխատանքի միջամտության մեթոդները

Սոցիալական աշխատանքի պրակտիկա	Լիբերալ	Ռադիկալ	Սոցիալիստական
Գ ն ա հ ա - տում	<ul style="list-style-type: none"> • Ա ն հ ա տ ա կ ա ն կարիքներ • Ա ն հ ա տ ա կ ա ն կարիքների և հնարավորությունների միջև կապ • Ս ո գ ի ա լ - ի ն ս - տ ի տ ու ց ի ո ն ա լ աջակցության գոյություն 	<ul style="list-style-type: none"> • Օպրեսիվ սոցիալական հարաբերություններ, որոնք արմատացած են հայրիշխանության մեջ • Սոցիալական և ինստիտուցիոնալ կառուցվածքներ, որոնք խթանում են հիերարխիկ գենդերային դերերը • Անձնային հատկանիշներ, որոնք պատրիարխատի արդյունք են 	<ul style="list-style-type: none"> • Ինստիտուցիոնալ համակարգ, որը ստեղծվել է պատրիարխալ և դասակարգային համակարգերի կողմից • Անձնային հատկանիշներ, որոնք հանդիսանում են դոմինանտ համակարգի արդյունք
Մ ի ջ ա - մտության ռ ա վ մ ա - վ ա ռ ու - թյուններ	<ul style="list-style-type: none"> • Ա ն հ ա տ ա կ ա ն խորհրդատվություն, կնոջ ուժեղացում • Խմբային աշխատանք • Ադվոկացիա ընդդեմ խտրականության 	<ul style="list-style-type: none"> • Գ ի տ ա կ ց ու թ յ ա ն բարձրացում կնոջը ճնշման ենթարկելու մասին • Ի ն ք ն օ գ ն օ թ յ ա ն խմբեր • Կանանց մոբիլիզացում կանանց իրավունքներին շուրջ 	<ul style="list-style-type: none"> • Գ ի տ ա կ ց ու թ յ ա ն բարձրացում դասակարգային, սեքսիստական և այլ տեսակի ճնշումների վերաբերյալ • Աջակցություն, ինքնօգնություն և ադվոկացիա՝ ուղղված հիմնարար կարիքների լուծմանը • Կ ո ա լ ի ճ ի ա ն եր ի ստեղծում անհատներին և խմբերին ուժեղացնելու համար

Սոցիալական աշխատանքի պրակտիկա	Լիբերալ	Ռադիկալ	Սոցիալիստական
Միջամտությունների նպատակները	<ul style="list-style-type: none"> • Անհատական խնդիրների լուծում • Խնդրահարույց իրավիճակի վերհանում • Աջակցող խմբերի ձևավորում 	<ul style="list-style-type: none"> • Դարձնել անձնականը քաղաքական • Խթանել փոփոխությունները հարաբերություններում • Մոբիլիզացնել կանանց փոփոխելու համակարգը և թոթափելու հայրիշխանության ճնշումը • Խթանել քույրության գաղափարը 	<ul style="list-style-type: none"> • հայրիշխանության և ճնշումների միջև կապը • Խթանել կոալիցիաների և անձանց ուժեղացումը, որոնք կբերեն սոցիալական փոփոխությունների • Թույլ տալ անհատներին բավարարել իրենց պահանջմունքները, բայց ոչ ի օգուտ ուրիշների

Դեպքի հետ աշխատելիս Ֆեմինիստական միջամտության պարագայում ևս կիրառվում է դեպքի վարման փուլային գործընթաց, որը սկսվում է իրավիճակի գնահատումից:

Դեպքի գնահատում իրականացնելիս Ֆեմինիստական միջամտության ժամանակ, ինֆորմացիայի ստացման հիմնական աղբյուրը հանդիսանում է շահառուն, և շահառուից ստացված տեղեկատվությունը, եթե անգամ չի համապատասխանում իրականությանը, հանդիսանում է ելակետային: Ֆեմինիստական միջամտության կարևոր գաղափարն է ստեղծել վստահելի հարաբերություններ շահառուի հետ, որի արդյունքում շահառուն կտրամադրի ամբողջ տեղեկատվությունը: Ֆեմինիստական միջամտությունը չի ենթադրում տնային այցելությունների կազմակերպում, քանզի կարելի է վստահության գաղափարը մասնագետի և շահառուի միջև:

Միջամտության ընտանեկան ձևերի կիրառման պարագայում, գնահատման փուլում մասնագետը կիրականացնի տնային այցելություն,

կապ կհաստատի սոցիալական ցանցի ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու հավաստի տեղեկատվություն:

Այսպիսով, Ֆեմինիստական և ոչ-սեքսիստական սոցիալական աշխատանքը կարևոր դարձավ շատ կանանց կյանքում: Շատ տեսաբանների կարծիքով, ինչպիսին է Վայսը, սոցիալական աշխատանքի Ֆեմինիստական պրակտիկան նույն սոցիալական աշխատանքն է տարբեր խոցելի խմբերի հետ իրականացվող: Այնուամենայնիվ, Ֆեմինիստական տեսությունը, նախապատվությունը տալիս է կանանց հիմնախնդիրներին և հայրիշխանական համակարգերի փոփոխության անհրաժեշտությանը:

Ֆեմինիզմը սոցիալական աշխատանքում մեծացնում է սոցիալական ապահովության քաղաքական համատեքստի ավդեցությունը: Թերևս, կանանց նկատմամբ բռնության պարագայում այս մոտեցումը շարունակում է կիրառության տեսանկյունից լինել առաջնային: Այսպես, Պելեդն, առաջարկում է ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ աշխատանքում ակտիվացնել և ուժեղացնել վերջիններիս, որպեսզի նրանք գտնեն միջոցներ, որոնք կօգնեն կառավարել իրավիճակը, կուգահեռ տարվող հոգեբանական աշխատանքին, շատ կարևոր է, որպեսզի սոցիալական աշխատողը կարողանա օգնել կնոջը փոփոխել իր առկա փորձն ու մեխանիզմներն՝ արձագանքելու բռնությանը: Իրավիճակի գիտակցման մակարդակը կնոջ կողմից հանդիսանում է առանցքային նպատակներից մեկը, որի շուրջ պետք է կառուցվեն օգնող հարաբերությունները: Իրավիճակի գիտակցմանը հասնելու առավել արդյունավետ միջոցներից են ինքնօգնության խմբերը:

Ֆեմինիստական մոտեցումը ներմուծել է սոցիալական աշխատանքի պրակտիկա սոցիալական աշխատող-շահառու երկխոսությունների և հավասարության հարաբերությունների մոդելը, ինչպես նաև անհատական հիմնախնդիրները քաղաքական դարձնելու միտումը: Այս մոտեցումը նաև հիմք է հանդիսացել սոցիալական աշխատանքում հակախտրական մոտեցման ձևավորման համար:

**Ֆեմինիստական մոտեցման
առանձնահատկությունները
հոգեբանական
խորհրդատվությունում**

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

2.1. Պատմական ակնարկ. **Ֆեմինիստական հոգեբանության և ֆեմինիստական թերապիայի վարձացման հիմնական փուլերն ու նախադրյալները**

Ֆեմինիստական հոգեբանությունը վարձացում է ապրել առավելապես 1960-ական թվականներին՝ հիմնվելով ֆեմինիստական փիլիսոփայության և ֆեմինիստական շարժման գաղափարների վրա: Նրա հիմնական գաղափարները հիմնված են ֆեմինիստական փիլիսոփայության վրա, որը հնարավորություն ընձեռեց ուշադրություն դարձնել կանանց հոգեկան առողջության հիմնախնդիրներին, քանի որ մինչ այդ կանանց հոգեկան առողջությունը առավելապես աստորոշման նպատակով էր դիտարկվում: Ֆեմինիստական փիլիսոփայության, հետագայում նաև ֆեմինիստական շարժման հիմնական փաստարկը՝ «անձնականը քաղաքական է», հանդիսանում է ֆեմինիստական հոգեբանության կարեվորագույն սկզբունքը, որը հետագայում դարձավ նաև ֆեմինիստական միջամտության կարևորագույն սկզբունքներից մեկը: Ֆեմինիստական հոգեբանությունը հնարավորություն ընձեռեց՝ նոր մոտեցում ցուցաբերել կանանց հոգեբանական, հուլական խնդիրների նկատմամբ, հնարավորություն տրվեց կանանց անձնական կյանքում առկա խնդիրների արմատը դիտարկել՝ հասարակությունում կանանց/տղամարդկանց դերերի, հայրիշխանական համակարգում կնոջ դերի արժեքի մաս, ընտանեկան և միջանձնային հարաբերություններում ոչ հավասար հարաբերությունների և այլ հասարակական խնդիրների համատեքստում:

Ըստ Ջոն Սոմմերս-Ֆլանագանի ֆեմինիստական հոգեբանությունը երեք հիմնական վարձացման փուլեր է անցել: **Առաջին փուլի** վարձացման հիմնական շեշտը դրված է այն գաղափարի վրա, որ հոգեբանությունը առհասարակ տղամարդկային գիտություն է, ստեղծված տղամարդկանց կողմից, իսկ կանանց հիմնախնդիրները արժեքավորված են կամ դիտարկվում են խտրական տեսանկյունից: Զարգացման այս փուլի համար կարևոր դեր է խաղացել Նեո-հոգեվերլուծության դպրոցի ներկայացուցիչ Կարեն Խորնին, ով 1922 թվականին իր հոդվածներից մեկում նշում է, որ հոգեբանությունը ծագել է տղամարդկանց մտածողության հենքի վրա, և

Եթե մենք փորձենք դուրս գալ այդ մտածողության սահմաններից, կանանց հոգեբանության գրեթե բոլոր խնդիրները կունենան այլ դրսևորում: Այս ժամանակահատվածում, մասնավորապես, հոգեվերլուծական դպրոցի առաջ քաշած գաղափարները «առնանդամի նախանձի», «հիստերիայի», որպես առավելապես կանանց բնորոշ համախտանիշի հասկացություններ, հակասում են ֆեմինիստական գաղափարախոսությանը: Ֆեմինիստական հոգեբանության վարձագումը կապված է նաև Կլարա Թոմսոնի հետ, ով «Միջանձնային հոգեվերլուծություն» գրքի հեղինակն է, ինչպես նաև «Կնոջ հոգեբանություն» գրքի հեղինակ՝ Հելեն Դեթչի անվան հետ. այս աշխատություններն անդրադարձ են կատարում հենց կանանց հոգեբանական առանձնահատկություններին և խնդիրներին, ինչն էլ իր հերթին նախադրյալ դարձավ այլ աշխատությունների ստեղծման համար, օրինակ, Ջին Բեյթեր Միլլերի, Ֆիլիս Չեսլերի և Ջուլիետ Միտչերի: [4,5]

Ջարգացման **երկրորդ փուլում** շեշտը դրվեց ֆեմինիստական գաղափարախոսության տարածման շուրջ տարբեր հոգեբանական դպրոցների և ուղղությունների վրա. հատկապես կարևորվեց սեքսիստական (բացատրությունը տե՛ս տերմինաբանական բառարանում) մեկնաբանությունների և մեկնությունների բացառումը, գլխավորապես ուշադրություն դարձվեց կանանց միջև փոխհամագործակցական միջավայրի ստեղծմանը: Բացի դա, այս փուլի առավել նշանակալի ձեռքբերումներից է համարվում ֆեմինիստական հոգեթերապիայի հիմնական սկզբունքների մշակումը: Հարկավոր է ընդգծել, որ 1982 թվականին առաջին անգամ կազմակերպվեց ֆեմինիստական հոգեթերապիայի հետևորդների ամենամյա հավաքը Կոլորադո նահանգի Վեիլ քաղաքում, որը համարվում է ֆեմինիստական մոտեցման կողմնակից հոգեթերապևտների և հոգեբանների առաջին պաշտոնական հավաք-հանդիպումը: Ջարգացման **երրորդ փուլում** մշակվեցին ֆեմինիստական թերապիայի տեսական հիմքերը և գաղափարները, ընդգծվեցին ֆեմինիստական թերապիայի սահմանները, առավելապես սկսվեց շեշտադրվել հոգեբանության, հոգեթերապիայի կարևորությունը էթնիկ, ռասայական, մշակութային խնդիրների լուծման հարցում, որոնց հետ կանայք բախվում են կյանքի տարբեր փուլերում: Ֆեմինիստական մոտեցմանը հարող հոգեբան-խորհրդատուները սկսեցին հատկապես վերլուծել կանանց հոգեբանական կամ հոգեբուժական խնդիրները, թերապևտիկ միջամտության թիրախները՝ կանանց հիմնախնդիրների տեսանկյունից, հոգեթերապևտի դերը հարաբերություններում, հավասարության գաղափարը հոգեթերապիայում:

Նշենք որ, ֆեմինիստական թերապիայի վարճացման վրա հսկայական ազդեցություն է ունեցել սևամորթ կանանց շարժումը. այն հնարավոր դարձրեց կնոջ կյանքում հանդիպող սոցիալ-տնտեսական, ռասայական խտրականությունների մասին բարձրաձայնելը: Այս շարժման արդյունքում ֆեմինիստական խորհրդատվական դաշտում նոր փոփոխություններ եղան և փորձ կատարվեց պատասխանելու մի շարք կարևոր հարցադրումների. արդյո՞ք, մեր կողմից տրամադրվող ծառայությունները հասանելի են տարբեր մշակութային արժեքներ, սեռական կողմնորոշում, տարբեր կրոնական արժեքներ ունեցող կանանց, և ինչպե՞ս են հենց այդ արժեքներն ազդում մեր աշխատանքի վրա և, ի վերջո, ինչպե՞ս ենք մենք անցկացնում մեր խորհրդատվությունները:

Հարկ է նշել, որ ֆեմինիստական թերապիան իր վարճացման ընթացքում տարբեր քննադատությունների է ենթարկվել: Դրանցից առավել տարածվածը վերաբերում էր ֆեմինիստական մոտեցման և հոգեթերապիայի գաղափարի սկզբնաղբյուրի հակասությանը, որի հիմնական փաստարկը հետևյալն էր. հոգեթերապիան այցելուի անհատականացման գործընթաց է, ինչը հակասում է ֆեմինիստական մոտեցման ամենակարևոր դրույթներից մեկին, ըստ որի, կնոջ անհատական խնդիրները խտրական և անհավասար քաղաքականության և հասարակական հարաբերությունների արդյունք են: Այս փաստարկը հնարավորություն ընձեռեց ֆեմինիստական մոտեցման կողմնակիցներին կանանց պատմությունները վերլուծել այնպես, որ սոցիալական հարաբերությունները չանհատականացվեն և քաղաքական փոփոխությունները կապվեն կանանց անհատական կյանքի փոփոխությունների հետ: Մյուս քննադատությունը հիմնված է այն կարծրատիպի վրա, որ ֆեմինիստական թերապիան միայն կանանց հիմնախնդիրներին է ուղղված, իսկ քննադատության հակափաստարկը հետևյալն է, որ կինը հարաբերությունների մեջ է հասարակության տարբեր շերտերի հետ՝ թե՛ տղամարդկանց, թե՛ երեխաների, թե՛ հաշմանդամություն ունեցող անձանց և այլն:

Այսպիսով, ժամանակակից ֆեմինիստական մոտեցմամբ թերապիայի հիմնական աշխատանքն ուղղված է L9FS համայնքի, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանված անձանց, բռնության ենթարկված կանանց հիմնախնդիրների լուծմանը, աշխատանքային անհավասարությանը, տնտեսական ռեսուրսների սահմանափակությանը և այլն: Ֆեմինիստական թերապիան հնարավորություն ընձեռեց նաև բարձրաձայնել այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են՝ երեխաների նկատմամբ

դաժան վերաբերմունքը, ընտանեկան բռնությունը, սեռական բռնությունն ու ինցեստը, առավել մանրամասն վերլուծության ենթարկվեցին կանանց մոտ հանդիպող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մենդի ընդունման խնդիրները, ընկճախտը, անպտղությունը, ինքնասպանությունը և այլ հիմնահարցեր: Ֆեմինիստական թերապիան հնարավորություն ընձեռեց դիտարկել և վերլուծել հոգեբուժական ախտորոշումներն ու համախտանիշները՝ գենդերային զգայունության տեսանկյունից, ինչն էլ հնարավորություն տվեց հոգեթերապիայում նոր մեթոդների և տեխնիկաների զարգացմանը: Բացի դա, հոգեթերապիայում ավելի ուշադրություն սկսեցին դարձնել «գենդեր» եկրոյթին, ի հակադրություն նրան, որ մինչ այդ հոգեթերապիան դիտվել է գենդերային հիմնահարցերի վերլուծության մասով չեզոք գործընթաց: Ֆեմինիստական մոտեցումը հնարավորություն տվեց ուշադրություն դարձնել գենդերային հիմնախնդիրներին ոչ միայն տանը կամ առանձին հարաբերություններում, այլ նաև հենց հոգեթերապետիկ հարաբերություններում: Առավելապես, շեշտադրում սկսվեց արվել այն գաղափարին, որ կնոջ փորձը ոչ այնքան իր անձնական փորձն է, այլ կապված է տարբեր կանանց փորձի հետ և կապում է նույն այդ կանանց փորձն ավելի քաղաքական իրականությանը, ինչը մեծապես փոխել է թերապևտիկ աշխատանքի ընթացքը:

2.2. **Ֆեմինիստական մոտեցումը հոգեթերապիայում. բնորոշ առանձնահատկությունները, հիմնական փուլերն ու սկզբունքները**

Ֆեմինիստական հոգեթերապիան համարվում է էկլեկտիկ հոգեթերապետիկ մոտեցում, այսինքն ընդունվում և կիրառվում է ցանկացած գործիք, տեխնիկա, որը չի հակասում ֆեմինիստական գաղափարախոսությանը: Ֆեմինիստական թերապիան իր զարգացման ընթացքում հնարավորություն տվեց դիտարկելու «կանանց հայցերը» և առանձնացնելու խնդիրների շարք, որոնք մինչ այդ չէին ուսումնասիրվել հոգեթերապևտների և խորհրդատուների կողմից: Մասնավորապես, դիտարկվեցին դեպրեսիա ունեցող կանանց հիմնախնդիրները, որոնց վերլուծությունը թույլ տվեց պատճառահետևանքային կապեր դուրս բերել հասարակությունում առ-

կա կանանց սոցիալ-տնտեսական խնդիրների, գենդերային դերերի և դեպրեսիայի տարածվածության միջև: Ֆեմինիստական թերապիան հնարավորություն տվեց նաև այլ տեսանկյունից դիտել բռնության հիմնախնդիրը: Մասնավորապես, թերապիայում կարևորվեց բռնության կամ վատ վերաբերմունքի համար պատասխանատվություն չվերցնելը՝ շեշտադրելով այն գաղափարը, որ բռնության համար բռնարարն է պատասխանատու և ոչ թե «վոհը»: Բացի դա, թերապիայում առանձնահատուկ ուշադրության արժանացան այն հարաբերություններն ու փոխհարաբերությունները, որոնք հնարավոր են դարձնում բռնության և խտրականության մշակույթի տարածումը:

Ֆեմինիստական մոտեցում ունեցող հոգեբան-խորհրդատուն իր աշխատանքում ի սկզբանե շեշտը դնում է այն գաղափարի վրա, որ բռնության համար պատասխանատուն բռնարարն է, և այցելուն իր վարքով, իր դրսևորումներով չի նպաստել, որ իրեն բռնության ենթարկեն այս մոտեցումը էական և բեկումնային դարձավ հոգեբանական խորհրդատվության համար, քանի որ մինչ այդ բռնության պատասխանատվությունը կոհի վրա է եղել և քննարկվել է վերջինիս վարքն ու դրսևորումները որպես բռնության պատճառ:

Ֆեմինիստական թերապիան, այդպիսով, հնարավոր դարձրեց ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության հիմնախնդրի մասին բարձրաձայնելը և շեշտադրեց հասարակությունում առկա գերիշխող մոտեցումը՝ կնոջը մեղադրելու որպես լավ/վատ մայր, որպես ոչ բարոյական/բարոյական կին, լավ կամ վատ հարս, սկեսուր և այլն, ցույց տվեց դրա ազդեցությունը և արտացոլանքը յուրաքանչյուր կնոջ կյանքում:

Ֆեմինիստական թերապիայի բնորոշ առանձնահատկություններից է գենդերային սոցիալականացման կարևորումը թերապիայում, հատկապես այն տեսանկյունից, որ տղաներին տրվում է գերակայություն աղջիկների նկատմամբ, ինչն իր հերթին բերում է ներանձնային խնդիրների վարձացմանը. օրինակ, դեռահասության տարիքում երկրորդային սեռական հատկանիշների վարձացման հետ կապված բարդույթներ, մարմնի կառուցվածքի, մարմնի սխեմայի ընդունման և ընկալման հետ

խնդիրներ և այլն: Հարկավոր է ընդգծել նաև, որ ֆեմինիստական մոտեցումը հոգեթերապիայում հնարավորություն տվեց խոսել միջին տարիքի կնոջ խնդիրների մասին, հատկապես դաշտանադադարի, ընտանեկան բռնության, բռնաբարության և այլ խնդիրների մասին:

Ֆեմինիստական թերապիայի մյուս առանձնահատկությունը կանանց կյանքի պատմությունների հավաքագրումն ու վերամիավորումն է մեկ ընդհանուր թեմայի շուրջ: Այդպիսի կյանքի պատմությունների հավաքագրմանն առավելապես նպաստում է խմբային խորհրդատվությունը/ հոգեթերապիան, երբ կանայք, ովքեր վերապրել են միևնույն փորձը, օրինակ, վաղ մանկական տարիքում սեռական բռնության են ենթարկվել, խմբային թերապիայի ընթացքում խոսում են իրենց վերապրած բռնության փորձի մասին: Հարկավոր է ընդգծել, որ ֆեմինիստական մոտեցման այժմեական հիմնական ձեռքբերումներից է կնոջ համար այնպիսի թերապևտիկ միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն կընձեռի նրան ոչ միայն իր կյանքի պատմությունը վերլուծել, այլ նաև առանձնացնել թեմաներ, որոնք անհանգստացնում են իրեն՝ որպես կին: Ամենակարևոր հարցերից մեկը, որ բարձրացրել է ֆեմինիստական թերապիան՝ ծառայությունների ներառականությունն է, այսինքն՝ տրամադրվող ծառայությունները պետք է հասանելի լինեն տարբեր մշակույթ կրող կանանց համար, օտարալեզու կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, նույնասեռական կանանց և այլ խմբերի ներկայացուցիչների համար: Այսօր ֆեմինիստական թերապիան բաց է Կույզերի, ընտանիքների, երեխաների և ցանկացած գենդերի անձի համար:

Ֆեմինիստական մոտեցումը հոգեթերապիայում չի բացառում տղամարդկանց ներառումը թերապիա՝ թե՛ որպես այցելու, թե՛ որպես խորհրդատու, միևնույն ժամանակ շեշտադրելով, որ ցանկացած պարագայում տղամարդը, կիսելով հավասար հարաբերությունների գաղափարը, կարող է չնկատել այն ուժը, որն ունի իր դիմաց նստած կնոջ նկատմամբ, հետևաբար աշխատանք պիտի տարվի ինտիմության, հուպականության արտահայտման, այցելու-հոգեբան հարաբերությունների կառուցման ուղղությամբ, որն ինքնին չի ենթադրում հիերարխիկ ուժ: Ֆեմինիստական հոգեթերապիայի առանձնահատկություններից մեկը նաև թերապիայի փուլայնությունն է, որը հնարավորություն է տալիս ավելի համակարգային մոտեցում ցուցաբերել աշխատանքում: Առանձնացնում են թերապիայի հետևյալ երեք հիմնական փուլեր. **առաջին փուլում** խորհրդատուն այցելուին օգնում է հասկանալ, որ իր անձնային խնդիրներն ունեն

սոցիալական «արմատներ», իսկ անձնական կյանքն ունի քաղաքական հիմք: **Երկրորդ փուլում** դիտվում և վերլուծվում է «ուժ» հասկացությունը, ձևավորվում են իրավահավասար հարաբերություններ թերապևտի և այցելուի միջև: **Երրորդ փուլում** թերապևտը սկսում է կարևորել այցելուի անձնային աճը, սկսում է համագործակցել այցելուի հետ կյանքի նոր ոճի կապակերպման և իրագործման հարցում: Կյանքի նոր ոճը վերաբերվում է գենդերային տեսանկյունից իրավահավասար հարաբերությունների կառուցմանն ու իրագործմանը, անձնային նույնականացման առանձնահատկություններին և սոցիալական վերափոխումների անձնային մակարդակին: [1,2,6]

Ֆեմինիստական թերապիայի փուլերը կարող ենք դիտարկել ընտանեկան բռնության ենթարկված կնոջ խորհրդատվության օրինակով, այսպես, առաջին փուլում խորհրդատուն այցելուի հետ հայցը ձևակերպելուց և հոգեբանական խնդիրները վեր հանելուց պատ, քննարկում է նաև ընտանեկան բռնության գենդերային տարրը, տարածվածությունը ՀՀ տարածքում, կարծրատիպերը, ոչ իրավահավասար հարաբերությունների ապդեցությունը փուլընկերների հարաբերությունների վրա, երկրորդ փուլում կարևորվում է այցելուի հարաբերությունները շրջապատող մարդկանց հետ, քննարկվում իրավահավասար հարաբերություններ կառուցելու կարևորությունը, առավելապես քննարկվում և վերլուծվում է բռնարարի հետ հարաբերությունների ոչ իրավահավասարությունը և դրանց վրա գենդերային կարծրատիպերի ապդեցությունը, իսկ երրորդ փուլում քննարկվում և վերլուծվում են արդեն կառուցված իրավահավասար հարաբերությունները ինչպես են դրսևորվում ընտանիքում, շրջապատող մարդկանց հետ հարաբերություններում, բռնության և վերահսկողության մշակույթի բացառումը յուրաքանչյուր հարաբերությունում:

Ֆեմինիստական հոգեթերապիայի հիմնական սկզբունքների առանձնացումը սերտորեն կապված է ֆեմինիստական փիլիսոփայության հետ և կարևորվում է թերապևտիկ հարաբերություններում: Այդ **սկզբունքներն** են՝

- ✓ Անձնայինը քաղաքական է, որը սոցիալական փոփոխության հիմքն է հանդիսանում, այսինքն՝ այցելուի խնդիրները ունեն նաև քաղաքական հիմք և անձնային փոփոխությունները կարող են բերել հասարակական փոփոխությունների:
- ✓ Խորհրդատվական հարաբերությունները հավասարության սկզբունքով են կառուցված. հոգեբանը փորձագետ չէ, այլ անձ, ով իր կենսափորձն ունի:
- ✓ Ցավը և հուլական խնդիրները դիտվում են որպես դրական ցուցանիշ, ըստ որի անձն ապրում և փորձում է հաղթահարել սթրեսային իրավիճակը:
- ✓ Ֆեմինիստ թերապիայի սկզբունքներով աշխատող հոգեբանը այցելուի վարքի վերլուծության ժամանակ անպայման հաշվի է առնում այն, որ այցելուի վարքի և դրսևորումների վրա ազդում են գենդերային կարծրատիպերը և գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն այս կամ այն հասարակությունում և պայմանավորված են մշակութային նորմերով:
- ✓ Ֆեմինիստական թերապիայի սկզբունքներով աշխատող հոգեբանը պետք է կիսի ֆեմինիստական մոտեցման հիմնական գաղափարները, վերլուծելով սեփական խարանները, խտրական վերաբերմունքը այս կամ այն հիմնախնդրին, բաց լինի նորություններին, գենդերային զգայունություն ունենա: [1,3,6]

Այսպիսով, ֆեմինիստական թերապիան անձակենտրոն թերապիայի տեսակ է, որն ունի իր առանձնահատկությունները, հիմնական փուլերն ու սկզբունքները, որոնք կարևոր են ֆեմինիստական մոտեցմամբ աշխատող թերապևտների և խորհրդատուների համար:

2.3. **Ֆեմինիստական թերապիայում կիրառվող առանձնահատուկ տեխնիկաներ և էթիկական սկզբունքներ**

Խորհրդատվական կամ հոգեթերապևտիկ աշխատանքում ֆեմինիստական մոտեցումն իր մեթոդաբանությամբ և տեխնիկաների բազայով հենվում է հոգեբանության հայտնի դպրոցների և ուղղությունների վրա՝ հոգեվերլուծություն, անալիտիկ հոգեբանություն, գեշտալտ հոգեբանություն և այլն, սակայն, դրա հետ միասին ֆեմինիստական թերապիան ունի մի շարք տեխնիկաներ և մեթոդիկաներ, որոնք մինչ այդ չեն գործածվել հոգեթերապիայում: Ֆեմինիստական թերապիան հիմնականում նպատակ ունի բացահայտելու այցելուի գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները, նույնականացնելու տվյալ հասարակությունում առկա ներքնայնացված գենդերային դերերն ու վերլուծել դրանք, միտել այցելուին անձնային աճի, ինքնագնահատականի և ինքնավստահության ձեռք բերմանը, վերլուծել միջանձնային հարաբերությունները՝ դիտարկելով դրանք հիերարխիայի և ուժի տեսանկյունից:

Հարկ է նշել, որ ֆեմինիստական հոգեթերապիան իր տեսական և գործնական արմատներով հենվում է չորս ֆեմինիստական փիլիսոփայական ուղղությունների վրա՝ լիբերալ ֆեմինիզմ, ռադիկալ ֆեմինիզմ, մշակութային ֆեմինիզմ և սոցիալական ֆեմինիզմ: Այսպես, լիբերալ ֆեմինիզմի հիմնական թիրախը սոցիալական վարքի մոդելների փոփոխությունն է՝ անձնային աճի շտրոհիվ: Դրան հնարավոր է հասնել միջամտության այնպիսի տեխնիկաների միջոցով, ինչպիսիք են՝ գենդերային դերերի վերլուծությունը, որն օգնում է այցելուին հասկանալու, թե ինչպես են գենդերային դերերը ազդում իր կյանքի վրա և ինչպիսին է հասարակությունում առկա ուժերի բաժանումը:

Մշակութային ֆեմինիզմը հիմնականում շեշտադրում է և վերլուծում է ձևերի տեսության երկրորդը և, հետևաբար, հիմնական գաղափարը, որը նաև օգտագործվում է ֆեմինիստական միջամտության ժամանակ, դա համագործակցությունն է, ինչն էլ իր հերթին շեշտը դնում է թերապևտիկ հարաբերությունների վրա:

Ռադիկալ ֆեմինիզմի հիմնական շեշտը հայրիշխսական համակարգում կանանց ճնշվածության փոփոխությունն է: Դա, ըստ այս ուղղության կողմնակիցների, հնարավոր է կանանց գիտակցության բարձրացման միջոցով, հետևաբար առավել միտված են դասընթացների միջոցով կանանց իրավագիտակցության բարձրացմանը, առօրյա կյանքի փոփոխություններով և ռեֆրեյմինգով:

Սոցիալական ֆեմինիզմը հիմնված է սոցիալական փոփոխությունների վրա և առավելապես դիտարկում է դասային, ռասայական խտրականությունների բացառումը, իսկ հիմնական տեխնիկաներն են՝ վերապիտակավորումը և վերաթիրախավորումը:

Ամփոփելով վերոշարադրվածը կարելի է առանձնացնել տեխնիկաների հետևյալ շարքը.

Գենդերային դերերի վերլուծություն և միջամտություն.

այս տեխնիկայի միջոցով դիտարկվում վերլուծվում է գենդերային դերերի ազդեցությունն այցելուի հոգեկան առողջության վրա և միջամտության ընթացքում այցելուի մոտ վարձացվում են հմտություններ, որն էլ ավելի զգայուն է դարձնում այցելուին առօրյա կյանքում դիտարկելու գենդերային դերերը, դրանց ազդեցությունը և պատճառահետևանքային կապը գենդերային խտրականության և կարծրատիպերի միջև:

Ուժի վերլուծություն. հոգեբանն ու այցելուն դիտարկում են անհավասար ուժի ազդեցությունն այցելուի աճի, վարձացման և ձեռքբերումների վրա:

Ռեֆրեյմինգ. թերապևտը կարող է օգնել այցելուին դիտարկել և վերագնահատել սոցիալական գործոնների ազդեցությունը վերջինիս հոգեկան կյանքի վրա և միասին փորձել վերաձևակերպել դրանք: Օրինակ, հոգեբանն այցելուի հետ համատեղ միջամտության արդյունքում որպես դեպրեսիայի առաջացման պատճառ կարող է դիտարկել արտաքին միջավայրն, այցելուի հետ կատարված բռնությունների շարքը, ընտանեկան ոչ առողջ հարաբերությունները, երկրի քաղաքական իրավիճակը և այլ

արտաքին պատճառներ, որոնք հետագայում միասին կարող են վերաձևակերպել որպես այցելուի անձնային վարձագմանը խթանող գործոններ :

Սոցիալական ակտիվության խթանում. հոգեբանը կարող է այցելուին խրախուսել այս կամ այն սոցիալական ակտիվության մեջ ներառվելու, որպեսզի այցելուն բացահայտի իր վարձագման հնարավորությունները: Այս տեխնիկան բավական լայն տարածում ունի ֆեմինիստական հոգեթերապիայում: Մասնավորապես, ֆեմինիստական մասնագիտական գրականության մեջ հաճախ դեպքերի վերլուծության նկարագրությունում կարելի է տեսնել, թե ինչպես է այցելուն ներառվում սեռական բռնության ենթարկված կանանց համար նախատեսված թեժ-գծում կամավորական աշխատանքներում, կամ ակտիվ մասնակցում այս կամ այն հանրային միջոցառումների, որոնք ուղղված են կանանց իրավունքների պաշտպանությանը: Թերապևտը նաև այցելուին ուղղորդում է տարբեր դասընթացների, գրքերի վերընթերցմանը, որոնք վերաբերում են կանանց իրավունքներին, ֆեմինիստական գաղափարախոսությանը և այլն:

Անձի մերկացում. հոգեբանը կարող է իր անձնական փորձի մասին պատմել այցելուին, որի հիմնական միտումը նորմալիզացնելն ու այցելուի սեփական հույզերն ու փորձը ազատազրկելու գործիք դարձնելն է:

Վերապիտակավորում. թերապիայի ընթացքում այցելուն սովորում է արժեզրկել այն պիտակները, որոնք ազդել կամ ազդում են իր կյանքի, ինքնագնահատականի, հոգեվիճակի վրա. օրինակ, հասարակությունում կա պիտակ, որ «նիհար կանայք են գրավիչ», վերապիտակավորումը բերում է այցելուին այն գաղափարին, թե ինչու է իրեն պետք լինել գրավիչ:

Անձի ուժեղացում. ֆեմինիստական խորհրդատվության հիմնական նպատակը այցելուի ուժեղացումն է, որն իրականաց-

վում է սեփական անձի նույնականացման, գենդերային դերերի, կարծրատիպերի վերաբերյալ տեղեկություն ստանալու, հավասար հարաբերություններ կառուցելու և ակտիվություն նախաձեռնելու միջոցով:

Հարկավոր է ընդգծել, որ ֆեմինիստական թերապիայում կարևորվում է հատկապես խմբային թերապիան, քանի որ խմբի դինամիկան հնարավորություն է տալիս կնոջը կիսվելու սեփական փորձով և ծանոթանալու այլ կանանց հիմնախնդիրներին: [1,4,6]

Հարկ է նշել, որ ֆեմինիստական թերապիայում նկարագրված տեխնիկաները շատ հաճախ օգտագործվում են հոգեբանության այլ ուղղություններից և դպրոցներից վերցված տեխնիկաների հետ համատեղ:

2.3.1. **Ֆեմինիստական թերապիայի հիմնական էթիկական սկզբունքները**

Ֆեմինիստական թերապիան հենվում է հոգեթերապիայում, խորհրդատվությունում առկա այնպիսի էթիկական սկզբունքների և նորմերի վրա, ինչպիսիք են՝ գաղտնապահությունը, մասնագիտական կոմպետենտությունը և այլն: Սակայն, կան մի շարք էթիկական սկզբունքներ, որոնք ևս կարևոր են, որպեսզի ֆեմինիստական մոտեցմամբ աշխատող մասնագետը կիրառի իր աշխատանքում: Մասնավորապես, այդպիսի էթիկական նորմերից են.

Մշակութային բավմապանության կարևորում

Ֆեմինիստական մոտեցում կիրառող թերապևտները վերապատրաստումների միջոցով փորձում են հնարավոր դարձնել տարբեր մշակույթի ներկայացուցիչների հետ աշխատելու իրենց հնարավորությունները. առավելապես կարևորվում է սեփական վերլուծությունը, թե ինչպիսին է եղել էթիկ, մշակութային, ռասայական ազդեցությունը անձնական կյանքում, հարցեր կապված գենդերային դերերի, նորմերի, սեռական կողմնորոշման հետ: Այսինքն, ընդունելով գերակա մշակույթի ազդեցությունը՝ որպես նորմալիզացիայի միջոց (այսինքն հասարակությունում առկա

գերակա նորմերը ընդունվում են որպես վարքային մոդել և իրականացվում առանց վերլուծության), բաց լինել մշակութային բավմասնության, տարբերությունների և առանձնահատկությունների առաջ:

Ուժի տարբերակում

Ֆեմինիստական մոտեցումը կիսող թերապևտները այցելուներին տեղեկատվություն են տրամադրում ուժի ակդեցության և դրա ինստիտուցիոնալության մասին, ինչպես նաև ուսումնական հաստատությունում, աշխատավայրում, միջանձնային հարաբերություններում դրա առօրյա ակդեցությունների մասին, և, ի վերջո, թե ինչպես է դա անդրադառնում այցելուի կյանքի ու կենսափորձի վրա:

«Փակող հարաբերություններ-ի քննարկում

Խորհրդատուն պիտի բարձրաձայնի և այցելուի հետ քննարկի այն հարաբերությունները, որոնք սահմանափակող ակդեցություն ունեն նրա կյանքի վրա, ներկայացնի այն հարաբերությունների «հնարավոր վտանգի» մասին, որոնք կարող են բռնարար հարաբերությունների նախանշաններ լինել. օրինակ, երբ վուզընկերը թույլ չի տալիս ընկերների հետ շփումներ, սահմանափակում է վուզընկերուհու ավատությունները՝ անհանգստանալու պատճառով և այլն:

Սոցիալական փոփոխությունների միտում

Ֆեմինիստ թերապևտները ձգտում են բավակի ճանապարհներով առաջ բերել սոցիալական փոփոխություններ: Դա կարող է լինել օրենսդրական բարեփոխումների մեջ ներգրավելով, շահերի պաշտպանությամբ պաղվելով, ֆեմինիստական համայնքի ակտիվ անդամ լինելով կամ բարձրաձայնելով այցելուների մոտ դիտարկվող խնդիրների հավաքական շարքը և այլն: Թերապիայի համապատասխան փուլում, երբ կառուցված են արդեն վստահելի հարաբերություններ և այցելուի ռեսուրսները դուրս են հանված, թերապևտը կարող է նաև այցելուին խրախուսել բարձրաձայնել իր խնդրի մասին, օրինակ, ոստիկանություն դիմել, եթե քրեորեն պատժելի արարք է կատարվել իր նկատմամբ, բացի դա կարող է խրախուսել, որպեսզի այցելուն ներառվի սոցիալական այս կամ այն շարժման մեջ: Ֆեմինիստ խորհրդատուները կամ թերապևտները, կարևորելով անձնայինը քաղաքական է սկզբունքը, հակված են այն գաղափարին, որ սոցիալական փոփոխությունը մշտական է: [1,3]

**Ֆեմինիստական մոտեցմամբ
իրականացված դեպքերի
վերլուծություն և
դեպքերի վարման
առանձնահատկություններ**

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Դեպքերի նկարագրության համար հիմք են հանդիսացել «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» և «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություններին դիմած կանանց կյանքի պատմությունները: «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հնարավոր է դիմել թեժ-գիծ ծառայության միջոցով, որտեղ բռնության ենթարկված անձիք ստանում են սոցիալ-հոգեբանական աջակցություն և իրավաբանական անվճար խորհրդատվություն: Դեպքերի վարումը իրականացվել է ֆեմինիստական մոտեցման սկզբունքների հենքի վրա բազմամասնագիտական թիմի կողմից (սոցիալական աշխատող, հոգեբան, փաստաբան):

Կին, 38 տարեկան, ամուսնացած, ունի երկու անչափահաս երեխա, դիմել է թեժ-գիծ ծառայության՝ հուլյան Ժամանակահատվածում, ինքնասպանության բազմակի փորձերով. սեռական բռնության և ընտանեկան բռնության է ենթարկվել:

Առաջնային գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ թեժ-գիծ դիմելուց չորս ամիս առաջ կինը ենթարկվել է բռնաբարության գործընկերոջ կողմից, ում հետ ընկերական հարաբերությունների մեջ են եղել, հաճախ քննարկել են միասին երեխաների և ընտանիքի խնդիրները: Գործընկերը սպառնալիքների, ստիպողական գործողությունների միջոցով տարել է կնոջն անհայտ վայր, որտեղ էլ բռնաբարել է՝ Կուրախեռաբար կիրառելով ֆիզիկական բռնություն նրա նկատմամբ (խեղդել, հարվածել): Բռնաբարությունից հետո սպառնացել է, որ կսպանի նրա երեխաներին և կպատմի ամուսնուն, թե իրենք սիրային հարաբերությունների մեջ են գտնվել, եթե կինը դիմի որևէ անձի կամ ոստիկանություն: Կատարվածից հետո կինը փորձել է մի քանի անգամ ինքնասպանություն գործել, սակայն ամուսինը կանխել է փորձերը, փորձել հասկանալ ինչի է կինը նման քայլի դիմում և բազմաթիվ ճնշումների տակ՝ նա ստիպված պատմել է իր հետ կատարվածի մասին: Դրանից հետո ամուսնու նախաձեռնությամբ դիմել են ոստիկանություն, հարուցվել է քրեական գործ, սակայն քրեական գործը կարճվել է: Հարկավոր է ընդգծել, որ առաջնային գնահատումից հետո աշխատանքներն իրականացվել են մի քանի ուղղություններով՝ հոգեբանական խորհրդատվություն, իրավաբանական խորհրդատվություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն: Այսպես, հոգեբանական խորհրդատվության ընթացքում հիմնական հայցը կապված էր բռնաբարությունից հետո հուլյան և հոգեբանական խնդիրների հետ, սակայն խորհրդատվության ընթացքում պարզ դարձան մի շարք խնդիրներ: Կնոջ

գենդերային սոցիալականացումը բավականին դժվարություններով է անցել, հատկապես դեռահասության տարիքում սեփական մարմնի ընդունման և հակառակ սեռի հետ հարաբերությունների կառուցման դժվարություններ է ունեցել, ինչպես նաև պարզ դարձավ, որ մինչ բռնաբարության դեպքը և դրանից հետո կինը նաև ամուսնու կողմից է ենթարկվել ֆիզիկական և հոգեբանական բռնության: Հոգեբանական խորհրդատվության ընթացքում վերլուծվել են բռնաբարության հետևանքով առաջացած մեղքի, ամոթի, սպառնալիքի և այլ հույզերն ու սեփականությունը, առավելապես շեշտադրվել է կնոջ ինքնագնահատականի և ինքնավստահության խնդիրները, ինչպես նաև ընտանեկան բռնության հետևանքով առաջացած հույզական կախյալության և «սոսնձման» հիմնախնդիրը: Վերլուծվեց բռնության պատճառները, հայրիշխանական համակարգի ազդեցության հենքով, ինչպես նաև վերաձևակերպվեցին գենդերային դերերի մասին պատկերացումները, շեշտադրվեց վերջինիս սոցիալական ակտիվության կարևորությունը կանանց իրավունքների հարցում:

Սոցիալական աշխատողի կողմից առաջնային գնահատմանը հաջորդեց միջամտության պլանի կազմումը և թիմի անդամների հետ հանդիպումը և պարտականությունների բաշխումը: Մասնավորապես, սոցիալական աշխատողի օգնությամբ իրականացվեց կնոջ գիտակցության բարձրացում ընտանեկան բռնության, բռնաբարության դեպքի վերաբերյալ, մատնանշվեց, որ կնոջ խնդիրները չունեն անձնային բնույթ և բխում են հայրիշխանական համակարգի կառուցվածքային խնդիրներից: Բռնարարի հետ հետագա շփումներից խուսափելու նպատակով կինը բռնաբարությունից հետո դուրս էր եկել աշխատանքից, հետևաբար շեշտը դրվեց նաև տնտեսական ուժեղացման վրա, մասնավորապես, աշխատանքներ տարվեցին կնոջ վերականգնության վերականգնման ուղղությամբ: Իրականացվեց նաև տեղեկատվության տրամադրում ընտանեկան բռնության, սեռական բռնության վերաբերյալ: Սոցիալական աշխատողի հետ հանդիպումների ընթացքում քննարկվեցին ամուսնու և երեխաների հետ փոխհարաբերությունները՝ շեշտադրելով կնոջ ապաստության գաղափարը:

Ֆեմինիստական աշխատանքի առանձնահատկությունները վերը նկարագրված դեպքի վերլուծության օրինակով.

Առաջնային փուլում դիտարկվեցին և վերհանվեցին կնոջ ռեսուրսային կողմերը, բացառվեց կնոջ «զոհ» և «բռնության ենթարկվելուն նպաստող» վարք հասկացությունները, երկրորդ փուլում առավելապես շեշտը դրվեց կնոջ իրավեկվածության բարձրացմանը գենդերային հիմքով բռնության տարատեսակների, ընտանեկան բռնության առաձևահատկությունների վերաբերյալ, վերլուծվեցին կնոջ մոտ առկա գենդերային կարծրատիպերը և պատկերացումները, վերջնական փուլում կարևորվեց կնոջ սոցիալական ակտիվությունը՝ որպես սեռական բռնություն և ընտանեկան բռնություն վերապրած անձ և կարևորվեց կնոջ ապատության գաղափարը:

Միջամտության այլ ձևերի կիրառման պարագայում, աշխատանքները կտարվեին կնոջը ստեղծված իրավիճակին հարմարացնելու ուղղությամբ: Կշեշտադրվեր սոցիալական ցանցի անդամների, մասնավորապես՝ ամուսնու հետ կնոջ իրավիճակի ընկալման ուղղությամբ:

Կին, 56 տարեկան, ամուսնացած, դիմել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ վերջին շրջանում միջանձնային հարաբերությունների խնդիրների պատճառով:

Առաջնային գնահատման արդյունքում պարզվեց, որ կինը զրկվել է բարձր վարձատրվող աշխատանքից տարիքային և գենդերային պատկանելիության պատճառով: Տանը ապրում է ամուսնու հետ միասին, ով ևս չի աշխատում առողջական խնդիրների պատճառով, իսկ երեխաները արտերկրում են: Գնահատումից հետո աշխատանքները իրականացվեցին 2 հիմնական ուղղությամբ՝ սոցիալական աշխատողի հետ հանդիպումներ և հոգեբանական խորհրդատվություն:

Սոցիալական աշխատողի կողմից բացահայտվեցին կնոջ ուժեղ կողմերը, որոնք հիմք հանդիսացան կնոջ և սոցիալական աշխատողի հետ բիվնեսի նախագծման համար: Մասնավորապես, աշխատանքի ընթացքում բացահայտվեց, որ կինը հմուտ գորգագործ է և ապատ ժամանակ հաճախ է վբաղվել գորգագործությամբ, ուներ ավարտված աշխատանքներ, որոնք սակայն, սպառելու խնդիր ուներ: Կնոջ ակտիվացման միջոցով մշակվեց գորգերի աշխատանքների կատալոգ և ուղարկվեց պոտենցիալ գնորդներին, որոշ ժամանակ անց, նա ստացավ մի շարք շահավետ առաջարկներ և սկսեց կապմակերպել սեփական բիվնեսը:

Հոգեբանական խորհրդատվության ընթացքում հիմնական հայցը կապված էր վերջին շրջանում միջանձնային հարաբերությունների խնդիրների հետ, հատկապես, կինը ընդգծում էր վերջին շրջանում ինքնագնահատականի խնդիրների մասին և գերակշռող հուլական ցածր տրամադրության մասին: Վերլուծությունը ցույց տվեց, որ ամուսնական հարաբերությունները վերջին շրջանում բավական լարված են, կինը ստիպված ամուսնացել և հետագայում հանուն երեխաների ապրել է իր ամուսնու հետ, իսկ վերջին շրջանում՝ երեխաների մեկնելուց հետո, ավելի են սրվել հարաբերությունները: Ցանկանում էր ամուսնալուծվել, սակայն ուներ թե՛ տարիքային վախեր, թե՛ շրջապատող միջավայրի մարդկանցից քննադատվելու վախեր: Հոգեբանի հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ամուսնալուծության գաղափարը բավական հակասական հույվեր և մտքեր է առաջացնում կնոջ մոտ: Դրանք վերլուծվելուց հետո կնոջը ցույց տրվեց գենդերային դերերի առանձնահատկությունները, փոխվեց պատկերացումները «ամուսնալուծված կին» պիտակի մասին և գենդերային դերերի մասին:

Ֆեմինիստական աշխատանքի առանձնահատկությունները վերը նկարագրված դեպքի վերլուծության օրինակով.

Առաջնային փուլում դուրս հանվեց կնոջ ռեսուրսային կողմերը և առանձնահատկությունները, վերլուծվեց հասարակությունում առկա գենդերային կարծրատիպերի, պատկերացումների ազդեցությունը կնոջ կյանքում և որպես պատճառներից հիմնականը հոգեբանական և սոցիալական խնդիրների համար, և վերջնական փուլում վերապիտակավորվեցին նույն գենդերային պատկերացումներով պայմանավորված հասկացությունները և արդեն վերապիտակավորված պատկերացումները վերլուծվեցին և աստիճանաբար գործադրվեց կնոջ կողմից իր անձնական կյանքում:

Հատկանշական է, որ **ֆեմինիստական միջամտության շնորհիվ**, բարձրաձայնվեց այս խնդիրը մակրոմակարդակում, քանզի այստեղ անձնայինը քաղաքական է սկզբունքը առաջնային է, մինչդեռ, **այլ միջամտության** պարագայում, միջամտությունը կսահմանափակվեր միայն միջամտությամբ միկրոմակարդակում:

21 տարեկան երիտասարդ կին՝ դիմել է կենտրոն աջակ-

ցուօյուն ստանալու նպատակով՝ վերջինս անցանկալի հղիության 3 շաբաթում էր:

Սոցիալական աշխատողի կողմից իրականացված առաջնային գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ կինը ցանկանում է արհեստական ընդհատման միջոցով հեռացնել պտուղը, քանի որ դեռ պատրաստ չէ ծնող դառնալուն, բացի այդ առկա է կայուն ֆինանսական եկամտի բացակայություն: Զուգընկերը պատրաստ է աջակցել արհեստական ընդհատման համար անհրաժեշտ գումարը տալով, սակայն նա ևս չի ցանկանում ստանձնել ծնողի դեր: Պարզվեց նաև, որ կնոջ ծնողները տեղյակ չեն իր հղիության մասին և ինքը ցանկություն չունի վերջիններիս պատմել և արդարանալ, մասնավորապես՝ վերջին շրջանում սրված հարաբերությունների պարագայում: Առաջնային գնահատումից հետո աշխատանքներն ընթացել են մի քանի ուղղություններով՝ սոցիալ-հոգեբանական աջակցություն, հոգեբանական խորհրդատվություն, իրավեկվածության բարձրացում, որոնք իրականացվել են մինչև հղիության արհեստական ընդհատումը, այնպես էլ դրանից հետո: Երիտասարդ կնոջը տեղեկատվություն է տրամադրվել սեռավարակների, պաշտպանված սեռական հարաբերությունների վերաբերյալ, խոսվել է հղիության ընդհատման որոշման մասին, որ կինն ինքն է ընտրում շարունակել հղիությունը թե՛ ոչ, քանի որ դա իր իրավունքն է. տեղեկատվությունը տրամադրել է վերապարտաստված մասնագետի կողմից՝ ֆեմինիստական մոտեցման սկզբունքներին համաձայն: Սոցիալական աշխատողի կողմից կատարվեց ուղղորդում դեպի գինեկոլոգիական ծառայություն, որտեղ կատարվեց հղիության արհեստական ընդհատումը: Սոցիալական աշխատողը, շահառուի համաձայնությամբ, կապ հաստատեց վստահելի ընկերուհու հետ, ով ստանձնեց աղջկա խնամքը հղիության ընդհատումից հետո:

Հոգեբանական խորհրդատվության ընթացքում քննարկվեց հղիության արհեստական ընդհատման արդյունքում առաջացած մեղքի պզացումը, աշխատանք տարվեց այն ուղղությամբ, որ կնոջ իրավունքն է ընդհատման որոշում կայացնելը, քանի որ իր մարմինն է և իր ցանկությունը: Քննարկվեց զուգընկերոջ հետ հարաբերությունները, ծնողների հետ հարաբերությունները, վերջիններիս ոչ հուպական և վերահսկողական վարքը իր նկատմամբ, հաճախակի վիճաբանությունները ուշ տուն գալու, կամ տնային հարցերով մայրիկին չօգնելու վերաբերյալ, հասարակությունում առկա կարծրատիպային պատկերացումները հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ: Կինը ներառվեց հղիության արհեստա-

կան ընդհատման դիմած կանանց խմբային հանդիպումների, որտեղ քննարկվեցին իր վախերը, մեղքի պատճառները, ամուսնի պատճառները և ցույց տրվեց դրանց հասարակական բնույթը, ինչպես է այդ ամենին ավելա- նում նաև կրոնական պատկերացումները և այլն:

Ֆեմինիստական աշխատանքի առանձնահատկություն- ները վերը նկարագրված դեպքի վերլուծության օրինակով.

Աշխատանքը իրականացվեց երկփուլ կառուցվածքով. մինչ հղիության արհեստական ընդհատումն աշխատանք տարվեց մեղքի պատճառներ, վախերի և կարծրատիպային պատկերա- ցումների շուրջ, կնոջը բացատրվեց, որ հղիության արհեստա- կան ընդհատումն իր որոշումն է, քանի որ դա բացառապես իր մարմնին է վերաբերում և իր իրավունքներին, և հղիության ար- հեստական ընդհատումից հետո շարունակվեց մասնագիտա- կան աջակցության տրամադրումը, խմբային հանդիպումների միջոցով, նաև հնարավորություն տրվեց կնոջը տեսնելու, որ ին- քը միակը չէ և իր խնդիրը կիսող կանայք ևս կան:

Միջամտության այլ ձևերի կիրառման պարագայում, աշխա- տանքները կտարվեին, կնոջ որոշման փոփոխության շուրջ, մասնավորապես կակտիվացվեին ռեսուրսներ, որոնք կապղեին կնոջ որոշման վրա: Թեև այդ աշխատանքները չէին կրի հար- կադրական բնույթ, սակայն որպես ցանկալի նպատակ կդիտ- վեր պտղի պահպանումը:

39 տարեկան կին, ունի մեկ անչափահաս երեխա, ամուս- նալուծված, սեռական բռնության ենթարկված անձ: Կինը հայտնեց, որ ցանկանում է, որ այդ տղամարդը պատժվի, սակայն նախկինում չի կարողացել դիմել, քանի որ ամա- չել է, թե ինչ կմտածեն մարդիկ իր մասին:

Սոցիալական աշխատողի կողմից առաջանային գնահատումից հետո պարզ դարձավ, որ կինը 30 օր առաջ սեռական բռնության է ենթարկվել իր պուզընկերոջ կողմից, ում ճանաչում է մոտ 2 տարի և ում հետ սիրա- յին հարաբերությունների մեջ են գտնվել: Վերջին շրջանում հարաբերու-

յունները լարվել են, քանի որ ինքը պարզել է, որ Կուզնկերը ընտանիք ունի և ամուսնացած է: Դրանից հետո, կինը չի ցանկացել շարունակել հարաբերությունները: Մոտ 6 ամիս հարաբերություններն ընդհատված են եղել: Մոտ մեկ ամիս առաջ, տղամարդը վանգահարել է իրեն, խնդրել հանդիպել, քանի որ կարևոր քննարկելու խնդիրներ ուներ: Հանդիպել են սրճարանում, խոսել և պարզաբանել ինչ-որ հարցեր, որից հետո, տուն ճանապարհելուց, ավտոմեքենայում փորձել է ստիպողական սեռական հարաբերություն ունենալ կնոջ հետ, հարվածել է վերջինիս դեմքին, ինչի արդյունքում կնոջ քթից արյունահոսություն է սկսվել, որից հետո տղամարդը բռնաբարել է կնոջը: Աշխատանքն իրականացվեց մի շարք ուղղություններով՝ իրավաբանական խորհրդատվություն, հոգեբանական խորհրդատվություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն: Սոցիալական աշխատողի կողմից, կնոջ հետ աշխատանքներ տարվեցին, նախկին Կուզնկերոջ դեմ ոստիկանությունում բողոք ներկայացնելու ուղղությամբ: Դեպքին կցվեց նաև փաստաբան, ով կներկայացներ կնոջ իրավունքները նախաքննության և դատավարական գործընթացներում: Քանի որ բռնաբարությունից հետո կինը տևական ժամանակ չէր այցելում աշխատանքի, սոցիալական աշխատողը կնոջ հետ միասին հանդիպեց նախկին գործատուի հետ, կնոջ աշխատանքը վերականգնելու նպատակով:

Հոգեբանական խորհրդատվության ընթացքում վերլուծվեցին սեռական բռնության հետևանքով առաջացած հույսական խնդիրները, հիշողության ամկայծումները, մեղքի պագցումը, ամոթը, բռնարարից վախը և այլ խնդիրները: Հոգեբանական խորհրդատվության ընթացքում քննարկվեց նաև կնոջ գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները, գենդերային դերերի ապդեցությունը իր վրա, քննարկվեցին և շեշտադրվեցին այնպիսի կարծրատիպային մտքեր, ըստ որի, ինքը, եթե նախկինում սեռական հարաբերություն է ունեցել այդ տղամարդու հետ, նշանակում է պիտի սպասեր, որ փորձ կլինի սեռական հարաբերության. առավելապես շեշտադրվեց հասարակությունում առկա կարծրատիպերի ապդեցությունը կնոջ կյանքի և որոշումների վրա:

Ֆեմինիստական աշխատանքի առանձնահատկությունները վերը նկարագրված դեպքի վերլուծության օրինակով.

Աշխատանքը իրականացվեց մի շարք առանձնահատկություններով. աշխատանք տարվեց մեղքի պագցման, վախերի և կարծ-

րատիպային պատկերացումների շուրջ, կնոջ հետ աշխատանք տարվեց այն ուղղությամբ, որ ինքը մեղավոր չի կատարվածի համար և պատասխանատվություն չի կրում, բռնության համար պատասխանատուն բռնարարն է, իսկ հասարակության կարծրատիպային պատկերացումներն նպաստում են մեղքի զգացման և ամոթի զգացման առաջացմանը:

Միջամտության այլ ձևերի պարագայում, կվերլուծվեին բռնաբարության պատճառահետևանքային կապերը:



Վերջաբան

Սույն ուղեցույցը նպատակ ունի ծանոթացնելու ֆեմինիստական մոտեցման հիմնական առանձնահատկություններին սոցիալական աշխատանքում և հոգեբանական խորհրդատվությունում: Ուղեցույցը գրվել է մասնագետների կողմից, ովքեր ունեն ֆեմինիստական մոտեցմամբ աշխատելու փորձ և գործնական հմտություններ, նպատակ ունենալով աջակցել մասնագետներին, ովքեր հետաքրքրված են ֆեմինիստական մոտեցմամբ և նպատակ ունեն մասնագիտական աջակցություն ցուցաբերել: Հարկավոր է ընդգծել, որ, ինչպես ներկայացված է ուղեցույցում ֆեմինիստական մոտեցումը թե՛ հոգեբանական խորհրդատվությունում, թե՛ սոցիալական աշխատանքում հիմք է դրել այցելու-մասնագետ (հոգեբան, սոցիալական աշխատող) հարաբերությունների կառուցմանը, անհատական խնդիրները հասարակական, քաղաքական դարձնելու միտմանը, ինչպես նաև մինչ այդ կանանց հիմնախնդիրներին գոյություն ունեցող մոտեցմանը, կանանց հոգեբանական և հույզական խնդիրներին՝ հնարավոր դարձնելով հակախտրական մոտեցման ձևավորմանը: Ֆեմինիստական մոտեցումը նաև հնարավոր դարձրեց «գենդեր» եզրույթի ներառումը հոգեբանական խորհրդատվության և սոցիալական աշխատանքի ոլորտ, ինչն էլ հնարավոր դարձրեց արտացոլել պատճառահետևանքային կապը, որ գոյություն ունի գենդերային կարծրատիպերի, գենդերային նորմերի և մարդու հոգեբանական խնդիրների միջև:

Օգտագործված գրականության ցանկ.

Սոցիալական աշխատանքի մաս

1. Barretti, M. (2001). Social Work, Women and Feminism: A Review of Social Work Journals, 1988-1997. *Affilia*
2. Berlin, S., & Kravetz, D. (1981, November). Women as Victims: A feminist social work perspective. *Social Work*, 26(6).
3. Dominelli, L. (1997b) 'Social Work and Social Development: A Partnership in Social Change' in *Journal of Social Development in Africa*, Vol. 12, No. 1.
4. Dominelli L. *Feminist Social work. Theory and Practice*, 2002, Palgrava.
5. Freeman, M. (1990, July 1). Beyond Women's Issues: Feminism and social Work. *Affilia*, 5(2).
6. Hooks, B. (2000). *Feminist Theory from Margin to Center*. Brooklyn: South End Press.
7. Nes, J., & Iadicola, P. (1989, January). Toward a Definition of Feminist Social Work: A Comparison of Liberal, Radical, and Socialist Models. *Social Work*.
8. Saulnier, C. (2000). Incorporating Feminist Theory into Social Work Practice: Group Work Examples. *Social Work with Groups*.

Հոգեբանական խորհրդատվության մաս

1. Corey G., 2001: *The art of integrative counseling*; Pacific Grove, CA
2. Corey G, 2001: *Designing an Integrative Approach to Counseling Practice*; Pacific Grove, CA
3. Sharf S.R., 2004: *Theories of psychotherapy and counseling: concepts and cases*, 3rd ed. Pacific Grove: CA, Brooks/Cole
4. Sommers-Flanagan J. and Sommers-Flanagan R., 2004: *Counseling and psychotherapy theories in context and practice, skills, strategies and techniques*, New Jersey
5. Selvira Draganovic, 2011: *Approaches to Feminist Therapy: A Case Study Illustration*, Epiphany
6. *Techniques in feminist therapy*

Տեղմիևաբանական բառարան

Գ

Գենդեր. Գենդեր եզրույթը գիտական ասպարեզ մտցրել է Ջ. Մանին 1955 թվականին և եզրույթը մեկնաբանվում է՝ որպես անձի «սոցիալական սեռ»:

Գենդերային խտրականություն. Գենդերային նախապաշարմունքների և կարծրատիպերի հետևանքով առաջացած պատկերացումների, դատողությունների և վերաբերմունքի դրսևորում:

Գենդերային հավասարություն. Մարդու հիմնարար իրավունք է: Այն ենթադրում է հավասար վերաբերմունքի և սեռով պայմանավորված խտրականությունից զերծ պայմանների և հնարավորությունների առկայություն հասարակությունում:

Գենդերային հիմքով բռնություն. Սեռով պայմանավորված բռնության ցանկացած գործողություն, որն ամենայն հավանականությամբ հանգեցնում է կանանց ֆիզիկական, սեռական, հոգեկան ցավի կամ տառապանքի, այդ թվում՝ նաև՝ նման գործողությունների սպառնալիքը, հարկադրանքը կամ ավատության կամայական սահմանափակումը, անկախ նրանից, թե այն տեղի է ունենում հրապարակայնորեն, թե մասնավոր կյանքում:

Ը

Ընտանեկան բռնություն. Ֆիզիկական, տնտեսական, հոգեբանական, սեռական բռնության կիրառումն է ընտանիքի մի անդամի կողմից մյուսի նկատմամբ: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հիմնականում բռնության ենթարկվում են կանայք իրենց զուգընկերների կողմից:

Ի

Ինցեստ. Սեռական կապ արյունակցական մտերիմ կապի մեջ գտնվող մարդկանց միջև (օրինակ՝ ծնող-երեխա, մորեղբայր/մորաքույր-վարմուխի/վարմիկ)

Լ

ԼԳԲՏ. Անգլերեն հապավում կազմված լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր բառերի սկզբնատառերից: Այն օգտագործվում է որպես **Նույնասեռական** (հոմոսեքսուալ՝ անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուպական, զգայական, ինտիմ և սեռական հակում նույն սեռի այլ անձի նկատմամբ) լեսբի՝ կին նույն-

Նաստռական, գեյ՝ տղամարդ, նույնաստռական), **բիսեքսուալ** (երկսեռական՝ անձ, որին բնորոշ է զգացմունքային, հույզական, զգայական, ինտիմ և սեռական հակում ինչպես նույն, այնպես էլ հակառակ սեռի այլ անձի նկատմամբ), **տրասնզենդեր** (զենդերափոխ՝ անձ, որի ինքնությունը կամ արտաքինը տարբերվում է իր կենսաբանական սեռին բնորոշ դերերի, վարքի, գործողությունների վերաբերյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպային սպասումներից) տերմինների հավաքական անուն:

Խ

Խտրականություն. Քաղաքացու, մարդու իրավունքների սահմանափակումը կամ զրկումը, նրա՝ այս կամ այն հատկանիշների պատճառով:

Հ

Հակամիլիտարիստական շարժում. Միլիտարիզմի դեմ ուղղված շարժումներ (միլիտարիզմ՝ բառացիորեն թագմանաբար նշանակում է զինապաշտական, հատուկ և ընդգծված մոտեցում՝ ռազմականացմանը): Միլիտարիզմը պետական քաղաքականություն է, գաղափարախոսություն և կոլեկտիվ գիտակցություն, որը պետության արտաքին քաղաքականության շրջանակներում կարևորում է զավթողական պատերազմները և ռազմական պաշտպանության վարճացումը:

Հայրիշխանություն. Կազմակերպությունների, ինստիտուտների և ամօրյա կենսագործունեության համակարգ է, որը թույլ է տալիս տղամարդկանց վերահսկել կանանց կյանքը:

Մ

Մակրոպրակտիկա սոցիալական աշխատանքում. Սոցիալական աշխատանքի մակրոմակարդակում իրականացվող աշխատանք, որի ներգործության օբյեկտը սահմանվում է հասարակությունը և մասնավորապես՝ պետական ինստիտուտները:

Ռ

Ռեֆլեքսիա. Լատ.՝ reflexio-անդրադարձում, այնպիսի կշռադատություն, որի դեպքում անձն անդրադառնում է իր սեփական գործունեությանն ու բովանդակությանը. հայտնի է նաև որպես հոգեբանական խորհրդատվության հիմնական տեխնիկներից մեկը, երբ խորհրդատուն անդրադաձնում է այցելուին իր իսկ հույզերը, զգացումները:

Ս

Սեքսիզմ. Խտրականության գաղափարախոսություն մարդկանց նկատմամբ՝ կախված նրանց սեռից, որն իրագործվում է նաև պրակտիկայում: Այն հիմնված է համոզմունքների վրա, որոնց համապատասխան կանանց կամ տղամարդկանց անհիմն ձևով վերագրվում են, կամ մերժվում կոնկրետ որակներ, ենթադրում է նաև գերազանցություն՝ ֆիզիկական և ինտելեկտուալ դրսևորումներում, չնայած չեն ներկայացվում համոզիչ ապացույցներ, որ տղամարդիկ ավելի հմուտ կամ լավ են, քան կանայք՝ և հակառակը: Ըստ այդմ, հաճախ առօրյայում օգտագործվում են արտահայտություններ, որոնք ընդունված է համարել **սեքսիստական** արտահայտություններ կամ մեկնաբանություններ, օրինակ՝ կանանց խելքը կարճ է, կարևորը կնոջ մարմնի բարեմասնություններն են և այլն:

Սուֆրաժիստական շարժում. 1830-1920թթ.՝ ֆեմինիզմի «առաջին ալիքը» ձևավորվեց սուֆրաժիստական շարժումից (անգլ. Suffrage - ընտրական իրավունք բառից): Շարժման հիմնական ուղղվածությունն էր կանանց կողմից հավասար ընտրական իրավունքների համար պայքարը:

Տ

Տեմինիզմ. Քաղաքական շարժման, գաղափարախոսության և սոցիալական շարժման ամբողջություն է, որը կիսում է միևնույն նպատակը՝ սահմանել, հաստատել և ապահովել կանանց քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքների իրացումը հասարակության մեջ:

